

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԵԼԻԶԱՐ ՊՈԼՈՒՄՈՐԴՎԻՆՈՎ

ՇԱՇՇԻԼԱՐ

(ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ)

Վրացերենից թարգմանեց՝ Արեսկ Մեհրաբյան

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930




894631

ԵԼԻԶԱՐ ՊՈԼՈՒՄՈՐԴՎԻՆՈՎ

ՇԱՇՇԻԼԱՐ

(ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ)

Վրացերենից արգմանեց՝ Արաի Մեմրաբլան



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
 ԵՐԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 1930

A 38965

1573

Հրատ. № 1339

Գրառեպ. № 5283(բ) Գատվեր № 698 Տիրաժ 2000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում

ՇԱՇՇԻԼԱՐ

— Արաշխա... ռւր ես... — կանչեց մի պառավ կին և աչքը ձգեց իրենց պատուհանի առջևով տարածվող կածանին:

Կածանը շարունակվում, մտնում եր ձորը, ուր քչքչալով ու նազանքով հոսում եր ժայռերից բղխող սառնորակ աղբյուրը:

Մայրն անհանգիստ սպասում եր իր աղջկան, իսկ աղջիկն անշարժ կանգնած աղբրի մոտ՝ աչքերը ցած գցած՝ նայում եր կէժին և կարծես չեր նկատում, վոր նա վաղուց լցվել, ջուրը թափում եր վրայից:

— Արաշխա, ռւր ես... — լսվեց նորից պառավ մոր ձայնը և նրա ալիքները կորան ձորի անհատության մեջ:

— Արաշխա, լս՞ւմ ես ինձ, Արաշխա... կյանքս մահու կըտամ, սուր ու գնդակի բաժին կդառնամ, բայց չերեք չեմ թույլ տա, վոր մեկն ու մեկը տեր դառնա քեզ. վոչ վոքին թույլ չեմ տա, մաղիդ անգամ դիպչի:

Նրա գլխավերևը — արծվի նման — կանգնել եր մի բարձրահասակ, լայնաթիիկունք ու ջլուտ բաղուկներով յերիտասարդ, և բոցավառ սրտով չերդում եր տալիս Արաշխային:

Աղբյուրը չեր դադարեցնում իր հանգիստ քչքչոցը և անցնելով խիճերի ու ավազների միջով՝ խուլ աղմկելով զարնվում եր նեղ ձորակի ժայռոտ ափերին, շարունակում եր իր ճամբան հենց այդ ձորակի միջով:

Սառնորակ աղբրի նման քչքչում ու խուլ աղմկում եր նաև Արաշխայի սիրտը: Իր իլիկաձև չերկայն մատներով խաղում եր կրծքին փաթամորեն փուված մազերի հյուսվածքների հետ և դողդողում եր.

— Ի՞նչ ե ուզում... ինչի եր ասում... մտածում եր ինքն իրեն Արաշխան և չեր համարձակվում բարձրացնել աչքեր ու նայել նրա դեմքին:

— Արաշխա... — լսվեց նորից մոր ձայնը և աղջիկը սթափվելով՝ հանկարծ կէժին վրա ընկավ, ուսեց ու առանց լսելու՝ արագ վազքով՝ դեպի տուն: Հեռվից միայն նշմարվում եյին նրա մարմնի գեղանի շարժումները. արագ ու սիրուն քայլվածքը:

— Ո՛ւր ես մինչև այժմ... արևի աչքը խավարեց քեզ սպասելուց. — ասաց մայրը և գիմալորելով նրան տան դռան մոտ՝ նշմարեց նրա ալլալված ու կարմրած դեմքը:

— Մայրիկ, գիտե՞ս ինչ... կուժը ցած դրեց, մոր թևից բռնեց ու տարավ սենյակը:

— Մայրիկ, Գեվան ասում է, թե վոչ՝ վոքին թույլ չեմ տա, վոր քեզ տեր դառնա. թի՛չ էն նշանակում այդ խոսքերը. թի՛չ ե ուզում դրանով ասել Գեվան:

— Նորից թող չհամարձակվի նույն բանը կրկնել, ապա թե վոչ...

— Մայրիկ, թի՛չ ե ուզում Գեվան...

— Սատանան տանի նրան. արյունակալած մարդ է. բայց ով կհամաձայնի քեզ նրան առաջ...

— Ո՞վ... Գեվան... Արաշխան ունքերը վեր քաշեց, չուց իր աչքերը և մտածկոտ հայացքով նայեց մոր շրթունքներին: Վայրկենապես մի քանի ալիքներ անցան նրա փալլուն ճակատի վերայով. այդ ալիքները շարունակ խաղում էին նրա ճակատին, մինչդեռ սրտի ներսում լսվում էին մոր արտասանած խորհրդավոր խոսքերը. —

«Արյունակալած մարդ է, արյունակալած մարդ է. .»

Սակայն մի քանի վայրկյան հետո, Արաշխան մոռացութիւն տվեց այդ տխուր մտքերը: Դիտե Արաշխան, վոր ինքը գեղեցիկ է, Արաշխան գիտի, վոր իր մազերն ու աչքերն ավելի սև են, քան Ենդուրի լեռներում իջած մութ գիշերը, վոր նրա դեմքն արևի նման պայծառ է ու լուսավոր, շրթունքները լեւադի նման մաքուր ու հստակ:

Կարծես բացվեց նրա սիրտը ծածկող թանձր վարագույրը, ներսն սկսեց աղմկել և հանկարծ նրա մեջ լերեան յեկան նոր զգացումներ, նոր ցանկություններ:

— Ամուսնանալ ե ուզում... — զնզնգաց նրա սրտում մի ձայն և լուց. շունչը կտրած ականջ է դնում, վորպեսզի նորից լսի իր սրտի այդ անուշ զնզնդոցը, նորից ապրի այդ տարորինակ, սակայն չափազանց դուրեկան զգացմունքը:

— Ա՛ղջի, շարժվիր. արևն խողովն ներս է խուժել մեր սենյակը, լեռներն արթնացել — կենդանացել են, իսկ ունքերդ անգամ չես շարժում:

Արաշխան հանկարծ սթափվեց և մի ակնթարթում կորանա հետաքննելով մի քիչ առաջ նրան պաշարող մտքերն ու զգացումները մի անգամ միայն նայեց նրա դեմքին. լիրկորդ անգամ

այլևս չհամարձակվեց. յերկրորդ անգամ չեր ել կարելի նայել, նրա առջ կանգնած եր հայրը, սուր արտահայտությամբ, սպիտակ, կախ ընկած խիտ բեղերով, գողգոված ունքերով, աչքերը նման դայրացած արծվի: Ձախ ձեռքով պինդ բռնել իր մինչև ծնկները հասնող լերկար խանչալի պատյանից. իսկ մյուս ձեռքը շարժում եր ողի մեջ՝ համապատասխան շեշտ տալով իր արտասանած խոսքերին:

— Զիրիթախաղի պիտի տանեմ քեզ, ձիաները չափ են գրցելու ջահելները ու հազար ու մի խաղ պիտի կազմակերպվի աչտոնդ, — ապա դարձավ դեպի իր կինը, վոր վաղուց պառավել — մեջքը ծռել եր:

Յերկար ժամանակ լուռ կանգնած նայում եր կնոջը: Բեղերը վոլորեց, ախ չքաշեց, բայց ներսում՝ սրտի մեջ զգաց արդեն անցյալ — ջահել կյանքի աստուածներ: Նրա աչքին պատկերացավ անցյալ ուրախ ու յերջանիկ կյանքը, իր մանկութունը, պառաված կնոջ ջահելութունը: Հիշեց, թե ինչպես փախցրեց նրան, լերը դեռ որիորդ եր և ծնողները համաձայն չեյին իրեն կնության տալու:

— Ո՛ր, վորքան գեղեցիկ եր նա այն ժամանակ. իսկ այժմ նայում եր նրա կմախքացած-չորացած դեմքին և կայծաքարի նման ամուր սիրտը՝ քնքշանում մեղմանում եր:

— Տխրությունը սաղակա՛ն չի քեզ, Գուրման — ասաց ինքն իրեն Արաշխալի հայրը և միքանի անգամ պինդ հազաց:

— Ուզու, ձիաները թամքիր, Զիրիթախաղի պիտի գնանք. Արաշխալին ել տանում եմ հետս, վոր վառի ջահելներէ սիրտը:

— Մի սիրտ արդեն վառվում ե, տեր ե կանգնել նրան, — բարկացած ու հեզնանքով պատասխանեց Ուզուն, առանց դեմքը շուռ տալու շարունակելով իր դործը:

— Ո՛վ ե, ո՛ւմ մասին ե խոսքդ, Ուզու, — նետահար յեղածի նման գոռաց Գուրմանը և ձեռքը տարավ խանչալին:

— Գեվան հետևիցն ե ընկել, շարունակ անհանգիստ ե անում նրան:

— Յես նրան ցույց կտամ... ոջախս թող չանպատվի. լեզու չբանա այդ մասին... թե չե, սպանություն կարող ե լինել: Առանց իմ կամքի, ուզում ե ամուսնանալ, — դայրացած գոռում եր Գուրմանը ձեռքի մեջ պտտցնելով խանչալը:

Ներս ընկավ սենյակը, պինդ բռնեց Արաշխալի թևից, չոքեցրեց պստուհանի մոտ և աչքերը վոլորելով սկսեց գոռալ վրան. —

— Դեվալին հավան ես կացել, հմ . . Դեվան քոնն ե, հմ . .

— Դեվան ինչ՞նչ պիտի իմը լինի, նո իր մորն ե, իր մոր դավալն ե, յես լի՛նչ գործ ունեմ նրա հետ. ցաղիլ տանեմ, հայրիկ, յերբեք վորեկ բան չեմ տա՞ծ նրան,— սարսափած դուդում եր Արաշխան բարկացած հոր վտաքերի տակ և խղճալի հայացքով նայում հորը, ուզում եր նրա խոսքերից մի բան հասկանալ, սակայն վոչինչ գլխի չեւ ընկնում, շարունակ միայն լըսում եր նուչն խոսքերը:

— Յեթե ալդպես ե, տեսնենք, թե ժւմ խանչալն ե ներկվելու,— ասաց Գուրմանը և պատուհանից գլուխը դուրս հանեց:

— Զիաները թամքեցի՛ր, շուտ արա,— ասաց կնոջը, ապա դառնալով աղջկան՝ հանգիստ տաւ.—

— Արաշխա, լալ հագնովիր. ջիւրիթախաղի պիտի դնանք: Դու միշտ ինձ լսիր և համողված յիղիր, վոր ամուսինդ կլինի համ անվանի մարդ, համ խելոք, համ քաջ, համ հարուստ:

Արաշխան վտաքի կանգնեց: Գլուխը հինեց մոր կրծքին և մինչդեռ հայրը խոսում եր նրա հետ ու խրատներ եր տալիս, Արաշխան շարունակ մտածում եր ու հարց տալիս ինքն իրեն, թե՛ լի՛նչին ե պետք իրեն ամուսին . . .

Պատուհանից արդեն յերևում եյին բակում կազմ ու պատրաստ թամքած ձիաները, վորոնց բաշը խնամքով մաքրում ու սանրում եր խաղուն:

*
*
*

Լեռ ու դաշտ կենդանանում-արթնանում եր: Յանկությունն ու ուրախութիւնը միաժամանակ բացվում—դուրս ելին ժայթքում, վորպես սրտիդ զգացումներ կոճակներ ու տիբական դառնում շրջապատում— առջիկ փովող տարածութիւն վրա:

Սպիտակ, վոսկեգուլն, գիշերի նման սև սարքավորված ձիաների վզներից կախված զանգուլակներն անուշ զրնգում եյին, ձիավորները սլանում ելին դեպի նշանակված վայրը և դրոշխ նման ծածանվում ելին նրանց չուխաների փեշերն ու թիկերը:

Այստեղ-այնտեղ խմբված յերիտասարդները թեև դեռևս անբեղ ու անմիտուք, սակայն խանչալները միջքներից կապած—հոխորտում եյին, ամեն մեկն իր խանչալով հպարտ:

— Դու գիտե՞ս, խանչալս խորասանից ե բերված,— կուրծքն առաջ ցցած, վառվռուն աչքերով պարծենում եր մեկը:

— Ի՞նչ ես խոսում, ալ տղա, ճվ ե լսել խորասանի խան-

չալ, խորասանի թուր հասկանալի չե, բայց խանչալ չերեք չի լինում,— դիվալին ժպտով ու հեղնանքով պատասխանում եր մյուսը:

— Յեթե աղպես ե, փորձենք, խանչալների բերանները զարկենք իրար, տեսնենք վորի՞նս ե կորվելու. են ժամանակ կիմանաս, խորասանի՞ չե, թե վոչ,— խոսում եր նորից առաջինը, և յերբ յերկուստեք կայանում ե համտձայնութունը, պատյաններից մերկանում են խանչալները և զարնվում իրար — կատարվում ե պողպատների պնդության ու դիմացկնության մրցութուն:

— Այս ել քեզ, խորասանի խանչալ, կտրվեց թե չե,— վհնց ե քեֆդ, ել լի՛նչ կասես հիմա,— հոխորտալով խոսում ե հաղթողը:

Պարտվողը մինչդեռ ամոթահար ու կոտրված՝ պատասխանում ե հաղթի լսելի ձայնով, քթի տակ մրթմրթալով.—

— Հետո՞ ինչ, գուցե քոնն ել խորասանի խանչալներից ե...

Մի քիչ հեռու, հրապարակի մյուս ծայրին, վորտեղ չերեում են մոխրագուլն ժայռերը և հեռվում՝ ձյունապատ լեռները, խմբվել են ուրիշները և իրենց տրամադրութունը փորձում հրացանաձգության մեջ. նրանցից յուրաքանչյուրն իր նոր մաքրած հրացանի արծաթապատ կոթը («դոնդադ») աջ վրտների մատներին հենած, վորպեսզի գետնին չդիպեն և չկեղտոտվեն—սրտատրոփ սպասում ե ազդանշանի:

Ամեն մեկը նրանցից կարծում ե, վոր ինքն ալելի լավ նշան խփի, քան իր դիմացի կանգնածը և այսպիսի վստահութամբ քլորացած նայում են իրար: Հանկարծ հրացանի բլթակն իջնում ե, լսվում ե ուժեղ պայթյուն, վորսորդական մանր գնդակների վզգոց ողի մեջ և հասնելով այնտեղ ճախրող թռչուններին՝ վիրավորում, թեաթափ ընկնում են գետին:

Մեկ, չերկու, չերեք—մի քանի անգամ իրար լետեից վիրավոր թռչուններն ընկնում են գետին, առաջ են գալիս նորանոր խմբեր, նոր մրցակիցներ և այսպես անվերջ՝ մինչև յերեկո, մինչև մութն ընկնելը: Մրցումն ողի մեջ ճախրող թռչուններին զարնելն ե:

Մի ուրիշ տեղ լսվում են ուրախ բացականչություններ. հանկարծ տիրում ե լուրթյուն: Հանգբերը, աշուղտկան լերդ ու տաղերը մեղդան են բաց անում. ճնգճնգում են սիմբերը, լսվում են քաղցր ու անուշ չերգի ձայներ: Աղմկում են քլամանչաները և սրանց դուրեկան նվազը հուզում, ել ալելի ուրախացնում—զվարթացնում ե ներկա յեղողներին:

Յերգը, նվագը, ուրախութիւնը թափանցում էր բոլորի սրտերը և այնտեղից դուրս քաշում հուզումնալից խոսքեր, ըզգացմունքի արտահայտութիւններ...

Լեւ ու դաշտ կենդանութիւն է ստացել:

Կենդանութիւն է ամենուրեք: Աղմուկ, բացահայնչութիւններ, իրարանցում, զգացված յերգեր, հրացանի ճայթյուններ, ու ձիաների վազքի դոփշուններու խրխինջ. այս բոլորը ներդաշնակում—կազմում և մի գեղեցիկ վոստաֆն, վորի մեջ էլին բռնված բոլորը միասին:

Ահա, գալիս—անցնում են ձիավորների շարքեր, նրանք ուշադիր հայացքով նայում են հեռու հորիզոնին, վորտեղ չերկինքն և միանում գետինն, ստեղծելով իրենց շուրջը, իրենց շրջապատին չեն նայում, անուշադիր են թողնում հաղարավոր, նրանց նաչող, դուլգ աչեր թեև իրենց սրտներում զգում են, վոր չնրանի չեն տալիս նրանց առողջ կազմվածքին, նրանց թե ու թիկունքին, նրանց նոսրացնելին, նրանց գարուն կյանքին:

— Իմ ձին արագավազ է...

— Իմը՝ էլ ավելի արագ—սրնթաց վազող...

— Իմն էլ պակաս չի,—խոսակցեցին իրար հետ ձիավորները:

— Փորձենք,—ասաց չորրորդն ու ամբողջ մարմնով ծովելով առաջ՝ զարկին կռունկներով, ձիաները սկզբում շփոթվեցին, մի քանի անգամ լսվեց նրանց վոտքերի դոփշունը միեւնույն տեղում, թեթեւ բարձրացան յետևի վոտքերի վրա և ապա խոշոր ցատկումներով սկսվեց վազքը: Հաղարավոր աչքեր հետևում են նրանց, մինչև կորչեն—անհետանան վազքի հետևից բարձրացող թանձր փոշու մեջ:

Հրապարակի մյուս կողմում՝ յերկար ձգվող ճանապարհի վրա, ճամբորդներն են յերևում: Նրանք տեղ տեղ կանգ էլին առնում և հրացաններ արձակում, չերզում էլին և անյերևակալելի աղմուկով մոտենում հրապարակին: Գալիս էլին խմբերով, գլուղի գլուղ ջահել-ջիվաններն առաջից և դեռ տեղ չհասած՝ ճանապարհին արդեն սկսվել էր վիճաբանութիւնը. գլուղը գլուղի հետ մրցման էր մտել—հրացանաձգութեան, ձիու վազքի, ճարպիկութեան—սղամարդութեան և յերգ ու խոսքի մեջ:

Իսկ ավելի հեռւում, նցեր գլուղի մոտով՝ ձիաների արագ վազքով դեպի մեզ էլին սլանում Աբաշխան ու Գուրմանը:

— Սանձը թույլ չթողնես, գժութիւններ կանի կապուտակը, թամբին պինդ կպիր,—սովորեցնում է հայրը վորդուն, թե

ինչպես պիտի ղեկավարի ձին և անվիհեր ծերունին արծվի նման սլափում եր առաջ:

— Հայրիկ ջան, արեդ անպակաս լինի ինձ, բայց ձիու վազքի—ջրիդախաղի մեջ քեզ միշտ կարող եմ գերադանցել,— պարծենալով ասում ե աղջիկը: Հին առյուծը վիրավորանքի տեղ ընդունելով այդ խոսքերը նետի նման թոցնում ե ձին ու սլափում դարի վեր բարձրացող ճամբով:

— Ենգուրիալի լեռների դժություն ե յեկել վրադ, Աբաշխա, ավելորդ բաներ ե խոսում.— ասում ե Գուրմանն այն Ժամանակ, յերբ ավելի շուտ հասել եր տեղ և յերբ արդեն հանգստացնում ելին ձիաները:

Քայլելով գնում են առաջ:

Անցան պուղի կողքով: Գուռն արդեն արթնացել եր և նրա այս ու այն անկյունից լսվում են կենդանի խոսակցության ձայներ:

Հանկարծ լսվեց մտրակի ուժեղ հարվածի ձայն և ցանկապատից թռավ սպիտակ ձիավորը:

— Բաթիր, գիշերը դուրսը չմտա, չուշանաս. մինչև մութն ընկնելը թեմի ժողովուրդն սպասիլու յե քեզ: Զիավորը դեմքը շրջեց. նրան կանչում ելին Բաթիր: Նա դեռ յերիտասարդ եր, ջեյրանի նման հպարտ և վազրի նման մեջքն ամուր. ուներ լալն ձակատ, փալլվող սև աչքեր:

— Յես գիտեմ, կաշխատեմ... արագ պատասխան տվեց ձիավորը և ձին չափ գցեց:

Նրա առաջ բացվում եր լալն խճուղին. աջ ու ձախ բլուրներ. ապա ժառեր, իսկ ավելի հեռվում՝ լեռներ ու անվերջ լեռներն իրենց՝ ամպերը զրկած բարձր գագաթներով և մոխրագույն մառախուղով պատած անհուն տարածություն:

Գնում ե ձին, գնում ե նաև Բաթիրը. նա մտազբաղ ե, լողում ե ծով մտքերի մեջ և նրա այդ մտքերը շարունակ պտրտվում են նցերի թեմի շուրջը:

Նրա կողքից գնում են Գուրմանն ու Աբաշխան: Գուրմանը նկատեց Բաթիրին և պատրաստվեց վողջույն տալու, սակայն Բաթիրը չեւ նայում դեպի նրանց Աբաշխան ել գլուխը բարձրացրեց և մի անգամ միայն նայեց Բաթիրին: յերկրորդ անգամ նայելն անհրաժեշտ ել չեւ, վորովհետև նրա դեմքը նկատվում եր ամեն տեղ, ուր վոր նայեր, վոր կողմ հայացք դցեր. նկարված եր ամեն կոճղի, ամեն քարի վրա:

Հողնած ձիւները գլուխները կախեցին զարիվեր բարձրացող ճամբի վրա:

Գալուստ եր Գուրմանի ձին, իսկ Գուրմանը մտածում եր արծվի թևերի ուժգնութեան վրա, վոր ճախրում եր ամպերից հեռու վերևում:

Արաշխալի ձին հաճախ դուրս եր դալիս խճուղուց և ճամբի ափերին կիսոված քարերը դիպչում ելին նրա սմբակներին. իսկ Արաշխան անհանգիստ եր ղգում՝ նոր ուղեկցի ներկայութեամբ:

— Բաթիր, բարի վողջույն,—ասաց Գուրմանը՝ դառնալով կողքից անցնող ձիավորին: Յերիտասարդը սթափվեց: Հատիկների նման ցրիվ յեկան նրա մտքերը: Արեգակնալին ժպիտ անցավ նրա դեմքին և քաղաքավարի ու հանգիստ պատասխանեց.—

— Վողջույնս կանխեցիր, ներքի, դեպի մեր..

— Ձիարշավի չենք գնում, ուղում եմ մի փոքր զվարճանալ, սիրտս ուրախացնել: Իսկ քեզ համար, զարմանում եմ...

— Յիս ել հողնած եմ, ուղում եմ մի փոքր հանգստանալ:

— Աղջիկս ե, ծանոթացիր,—ձեռքի ծալած մտքակն ուղղեց Արաշխալի կողմ և բավականութեամբ սկսեց նայել նրա սպիտակ ձիուն, վորն անմիջապես մի քանի թիթե ցատկումներ արավ և մոտենալով Արաշխալին՝ Բաթիրն իր ուժեղ ձեռքի մեջ առավ աղջկա քնքուշ մատները:

— Կարդալ-գրել գիտե, Բաթիր, յեթե գրադարանում հարմար ընթերցանութեան դիրք կա, տո՛ւր, թող կարդա, մտքի պաշարը կավելանա...

— Ուրախութեամբ,—պատասխանեց նա և աչքի առաջ պատկերացավ իրենց թեմի գրադարան-ընթերցարանը, վորտեղ յերկու հարյուրի չափ գրքեր կային:

— Անցեք մեր կողմ, կընտրեմ լավ կարդացվելիք գրքերից մեկն ու մեկը: Մի շաբաթ հետո, մենք ալստեղ լերեկուլթ ենք կաղամկերպելու, Թիֆլիսից ռադիո պիտի լսենք, կարող եք ներկա լինել, — ավելացրեց Բաթիրը և շեշտակի նայեց Գուրմանի դեմքին:

Գուրմանը, կարծես հարցական նշան դառած, նայում եր Բաթիրի դեմքին. նա չհասկացավ, թե ինչ բան ե ռադիոն, բայց ինքնասիրութունը թույլ չտվեց հարցնելու նրա նշանակութեան մասին:

— Կհանդիպենք և կտեսնենք,—պատասխանեց ծերունին համաձայնութեան նշան տալով:

Այա կողք-կողքի գնալով՝ խոսում-զրուցում ելին թեմի գյուղացիներին կենցաղի, գյուղի դրության և ընտանիքների ներքին կյանքի մասին. նրանք այդ խոսք ու զրուցի ժամանակ արդեն մոտեցել էին լեռան լանջին, վորից հետո արդեն սկսում էր ձիարշաղի հարթ տարածութունը:

— Ցտեսութուն, կտեսնվենք,— ծանր գլուխ տվեց Գուրմանը և ձիուց թռավ ցած. նույն արավ նաև Արաշխան: Զիաները կապեցին մի հարմար տեղ, կարպետը փռեցին և մեկնվեցին հանգստանալու:

— Զիրիթախաղի հրապարակը կենդանի տեսք էր ստացել. տեղ-տեղ լամբեր կաղմած չերգում պարում էին, վորին ներդաշնակում էին ծափն և ուրախ բացականչությունները:

Արաշխան հանգիստ չեր, նրա ուշքն ու միտքը ուրախացողների, պարեկողների կողմն էր. հանգիստ չկարողացավ պահել, ինչվոր բան քաշում էր նրան դեպի նրանց և տեղից վեր կացավ:

— Գնա, գնա Արաշխա, ուրախացիր. իսկ ինքն ամանից արաղը լցրեց թասի մեջ և դատարկեց:

Արաշխան կարմիր, ծաղկավոր շալը ձգեց ուսերին, վորի փայլն ել ավելի գեղեցիկ տեսք տվեց նրա սիրուն դեմքին և դանդաղ քայլվածքով դիմեց դեպի պարեկողները: Այսօր առաջին անգամն էր, վոր իրեն զգում էր ազատ: Հրապարակի չեղերքներով, կարծես թևավորված՝ գնում էր առաջ, սակայն սրբաբանի մեջ գաղտուկ ինչ վոր ցանկութուններ ելին արթնանում, ինչվոր անսովոր զգացումներ դանդաղորեն ալեկոծում էին նրա սիրտը:

«Մի վայրկյան կանգ առ», այս բառերը կարծես նետի նման մեխվեցին նրա սիրտը և չերկու ազահ աչքեր խանչալի սուր ծայրերի նման իջան Արաշխալի դեմքին:

— Ի՞նչ էս ուզում...— համարձակ զրմեց նա իր առաջ կանդնած Գեվալին:

— Չէ վոր ասել եմ, չեմ թույլ տա վոչ վոքի, վոր տիրանա քեզ. դու իմն ես, պատասխան եմ ուզում քեզնից:

Արաշխան հիշեց մոր խոսքերը, հոր բարկութունը և այն ամենը, ինչ վոր կատարվել էր այդ խնդրի շուրջը և ուղիղ նայելով նրա դեմքին՝ ասաց նրան վճռական.—

— Գեվա, ձեռք վերցրու ինձանից, վոչ մայրս և ցանկանում քեզ և վոչ ել հալրա, իսկ չեթե զբանք չեն ուզում, յես ինչի՞ս պետք և ուզեմ քեզ:

— Հորդ պատասխանը յես կտամ, իսկ քեզ կփախցնեմ: Հա՛վատա ինձ, վոր անպաշտան կանեմ, ինչ վոր ասում եմ, խոսքի տակը մնացողը չեմ,—պատասխանեց Գեվան և ավելի մոտեցավ նրան: Ապա ցածր ձայնով ավելացրեց.—

— Արաշխա, նայի՛ր ձախ կողմ՝ յերկու տղամարդ ևն կանդ—նած իրենց ձիաներով. յեթե ուզում ես, վոր հայրդ կենդանի մնա, հենց այժմ հետևիր ինձ:

Այս խոսքերը նետի նման խոցեցին Արաշխաչի սիրտը. նա ճիշտ վոր հրապարակի ձախ կողմում նշմարեց յերկու տղամարդ: Զայրույթից ու բարկությունից չեր իմանում ինչ անել:

— Արյունարբո՛ւ մարդ, ավելի լավ չի գետինը մտնես.— բարձր ձայնով ասաց Արաշխան և պատրաստվեց հեռանալ, սակայն Գեվան պինդ բռնեց նրա թևից և ոձի նման վսվսաց նրա ականջին.

— Զայն մի հանիր, հետևիր ինձ,—և այնպես պինդ սեղմեց նա թևը, վոր ցավից Արաշխան կուչ ու ձիդ չեղավ: Արաշխան դիտակցությունը կորցրեց, աչքերը մթնեցին. ամէն ինչ խավար ու անորոշ եր յերևում նրա աչքերին. կարծես ծառերն ընկնում արմատախիլ ելին լինում, լեռները տեղահան լինում և հրապարակը կարծես ճախարակի նման պտտվում եր նրա աչքերում Գեվանն թևերի մեջ առավ նրան ու փախցրեց:

Ժողովրդի մեջ աղմուկը դադարեց. դարմացած նալում ելին Գեվանին և տեսնում, թե ինչպե՛ս նա զոռով փախցնում եր աղջկան, սակայն գլխի չեյին ընկնում, թե ինչու՞մն ե բանը:

Հենց այդ ժամին մեկը հանկարծ բարձր կանչեց.

Փախցնում են, ոգնության հասեք...

Այս ձայնին հետևեց յերկրորդը և պինդ բռնելով նրա դուռը՝ կանգնեցրեց:

— Սպասի՛ր, Գեվան մեր թեմի մարդն ե, դավաճանե՛ւմ ես...

— Թեմի մարդը...կրկնեց նա, սակայն աչքը չհեռացնելով փախչողից:

Հրապարակի մի կողմում սպասող յերկու տղամարդ շարժվեցին առաջ, վոր ոգնության հասնեն, սակայն...նետի նման պլացավ սպիտակ ձիավորը և հարձակվեց Գեվանի վրա:

— Ազատ թող այդ աղջկան:

— Ո՛վ ես դու, քեզ հի՛վ ե հարցնում:

— Յես քեզ ասում եմ, ազատ թող.—գոռաց բարկությամբ լցված անձանոթը և ձեռքը տարավ խանչալին:

Շղթայվածի նման կաշկանդված ձեռքը հազիվ ազատվեց ձեռքից:

Գունատված Աբաշխան, կարծես թեթև քուն մտած՝ թուլացած ընկած էր դետնին: Գեվան բարկությունից խեղդվող հալացքով նայեց Բաթիրին: Արյունը պղտորեց, սակայն դիմացինն իր հուժկու բաղկով կանգնած էր նրա առջև. վռչինչ չկարողացավ անել:

Մարդիկ ինկան, հավաքվեցին նրանց շուրջը և հանդիսատեսի նման նայում ու սպասում էին հետևանքին:

Յերկու ակոյանները բավական չերկար լուռ նայում էին իրար, աչքերով չափում իրար վոտքից—զուլու: Աբաշխան հանկարծ ուշքի յեկավ, զգաստացավ, ցատկեց տեղից և տեսավ իր առաջ յերկու արծիճներ իրար ելին բռնվել: Նայեց Բաթերի դեմքին, և վորժան ուժ ուներ, սլացավ դեպի հայրը: Աչքերից արցունք էր հոսում, իսկ սրտում ուրախություն: Վազելով, շնչասպառ յեկավ հոր մոտ այն ժամանակ, յերբ նա արագից արդեն հարբած սեղանակիցների կենացն էր խմում: Աղջկա գլխն ուրախացրեց նրան, սակայն լերբ հշմարեց նրա գունատ դեմքն ու արցունքոտ աչքերը հարցրեց զարմացած.

— Ի՞նչ ե պատահել, Աբաշխա, ինչ՞ով չես ավազես գունատ ու տխուր:

— Վռչինչ, հայրիկ, շատ պարելուց հոգնել եմ,—ստեց Աբաշխան և վորպեսզի կեղծությունը չբռնվի, աչքերը վայր ձգեց:

Բաթիրն արագ շուռ յեկավ, թուով իր սպիտակ ձիու թամբին: Ձին սլացավ և ողի մեջ կախված մնաց Գեվոյի զարնելու համար պատրաստած բռունցքը. նայեց յերկար նրա յետևից և զայրացած գոռաց.—

— Ձեռքիցս չես պրծնիլ, մենք ելի կհանդիպենք իրար...

*
*
*

Որերն անցնում էին որերի յետևից սանձարձակ հրեղեն ձիու նման, և այդ որերն իրենց հետ տանում էին սրտի բաղմազան գաղտնիքներ, հիշողություններ ու մոռացության ելին տրվում առորյա պատահած դեպքերը. սակայն Գետն վոչ մի կերպ չէր մոռանում իր զլխից անցածը և դրա հետ կապված իր վորոշումը:

— Թող մի տեղ հանդիպենք, յես ցույց կտամ նրան, թե ի՞նչ ե մեզնից տղամարդը,—անդադար իր մտքում կրկնում էր նա և վրդովված— հեռաված վորոշում էր միշտ Բաթիրին:

Գուրմանի մեջ ևս վառվում եր վրեժխնդրության կաշծը. նա տանը միտին իմացավ մանրամասնությունը, թե ինչ եր պատահել Արաշխայի հետ և կատաղած գոռաց աղջկա վրա. —

— Ինչո՞ւ հենց այնտեղ չստացիր այս բոլորը. ինչո՞ւ ծածկեցիր. — Համոզված եր վոր յեթե տեղնուտեղն իմանար, տնշուշտ կյանքով կհատուցաներ Գեվան իր տղեղ վարմունքի համար, նա կստանար իր արժանի պատասխանը:

Միայն Բաթիրն եր, վոր հանդիսառ ու խաղաղ շարունակում եր իր աշխատանքը մոռացել եր ամեն ինչ, միայն յերբեմն-յերբեմն նրա աչքերի առաջ պատկերանում եր սարսափած դեմքով Արաշխան, աչք ել յերևի նրա համար, վոր նա շատ գեղեցիկ եր ու հմայիչ:

Սակայն այս հանդամանքն անգամ չեր շփոթեցնում ու անհանգստացնում Բաթիրին: Բաթիրը յուրահատուկ մտրդ եր. ամբողջ թեմում չեկիր գտնի նրան հավասար և նրա նման մեկ ուրիշը, խելացի, ուշիմ, շատ նորությունների գիտակ և քաղաքում ուսում առած — դաստիարակված:

Յեթե թեմում վորեկ հանրոգուտ բան եր կազմակերպվում, իմացեք, վոր նախաձեռնողը Բաթիրն եր. յեթե վորեկ բան արվում եր, անողը Բաթիրն եր: Մեկը կարիքի մեջ ե, դիմում եր Բաթիրի միջնորդության. դրա համար ել նա զարձել եր բոլորի սիրելին. դրա համար ել նրա արևով հյին լերդվում բոլորը, նա հանրաժանութի եր ամենքին:

Սակայն Գեվան զարձել եր նրա ամենավտխերիմ թշնամին, սպասում եր ճակատ առ ճակատ հանդիպման, վոր նրա արևը մտրեր, նրա կյանքը խավարեցներ: Յեվ հանկարծ, մի որ, մոտիկ անտառի ծայրին, յերկու ախոյանները հանդիպեցին իրար: Դեռ աչքերով. հալացքներով գրոհ տվին իրար վրա, կատաղի նալվածքով վիրավորեցին — ճակատեցին իրար դեմ. ապա Գևան գլխարկը շարտեց մի կողմ, չուխի փեշը հավաքեց գոտիի մեջ և շողաց խանչալը:

— Համապատասխան դիրք գրավիր, — գոռաց նա և ցատկեց առաջ:

— Անցիր, ճամբովդ գնա, միկնույն ե վոչինչ չես շահի, — արհամարհանքով պատասխանեց Բաթիրը և յերբեք չփորձեց զենքի ոգնությանը դիմելու:

— Խանչալիդ ծայրը ցույց տուր, ապա թե վոչ, նամուսը մի կողմ թողած՝ խանչալս կուղղեմ կրծքիդ, — գոռաց Գևան ավելի կատաղած և խանչալը բարձրացրեց:

կայծակի արագութեամբ ողի մեջ շողաց նաև Բաթիրի խան-
չալը և պողպատի սուր բերանները զարկվելով իրարու զրնդա-
ցին։ Այս առաջինը վրիպում եր միայն։

Ագահ գալլերի նման հարձակվեցին իրար վրա և յերկար
ժամանակ խանչուկով եր տեղի ունենում նրանց մեջ։

Յերկուսի ճակատներից ել քրտինքի կաթիլները ջրի նման
թափվում ելին ցած։ Թուքը չորացել եր նրանց բերանում,
սիրտները զարկում եր արյունակալած։

Հենց վոր մեկը խանչալը շողացնում եր ողի մեջ և ուզում
եր կատաղած խրել ուղիղ դիմացինի սրտի խորքը, նույն վայր-
կյանին դիմացինը ցատկում եր մի քայլ լետ և պողպատը հան-
դիպում եր հտկառակորդի պողպատին մարմնին չեր հասնում։

Դանի գնում կոիվը կատաղի բնույթ եր առնում, կայծեր
եյին ցայտում նրանց դեմքից ու աչքերից։ Մեկն ու մեկը պիտի
ընկներ, պարտվեր, մեկն ու մեկի արյունով պիտի ներկվեր հողը։

Վերջը Բաթիրն իր ուսին հավասար բարձրացրեց խանչալը
և մի ակնթարթում ուժեղ հարվածը պիտի իջներ Գեայի ուսին,
յերբ նա համապատասխան վոստոլն գործելով՝ կուսցավ։ Հար-
վածը վրիպից. սակայն Բաթիրի անմիջապես հաջորդող լերկորդ
հարվածը ժամանակ չովեց հակառակորդին համապատասխան
դիրք բռնելու—կտրվեց Գեայի բութ մատը, տաք արյունն ըս-
լսեց հոսել և ներկվեց խանչալի ծայրը։

Գեան շփոթվեց, յերբ տեսավ հոսող արյունը, կարծեց թե
ա թ ես ծանր վիրավորված ե, թուլացավ, խանչալը ձեռքից
ընկավ։

Շփոթված վորսի նման աչքերով նայում եր աջ ու ձախ և
րոպե առ րոպե սպասում եր, վոր սրտից արյունն առատու-
թեամբ պիտի դուրս ժալթքեր, ստեղծն նույն վայրկյանին գլխի
ընկավ, վոր վերքը ծանր չե, զգաստացավ, կուցավ գիտնին, վոր
զենքը վերցնի ու շարունակի կոիվը, սակայն Բաթիրն իր վոս-
քը դրեց արյունի մեջ շաղախված խանչալի վրա։ Մշտական խա-
ղաղ ու հանգիստ Բաթիրի դեմքն այս վայրկյանին խելագարի
չեր նման. աչքերից կրակի կայծեր եյին ցայտում. ինչպիսի սր-
հասական միտք շողաց նրա գիտակցութեան մեջ, այլալիված,
ուժեղ թափով շարժեց խանչալը և նշան առնելով ուզում եր խը-
րել Գեայի կուրծքը և վերջնականապես հաշիվը մաքրել նրա հետ
հանկարծ...

.

— Բաթիր... Բաթիր... — լսվեց մի ձայն:

— Խնչ ես ուզում, ո՞վ ես, — սթափվեց Բաթիրը:

— Խնչդ ես թե ինչ եմ ուզում, չես հեղինակն եմ, լինչ ես անում, մտրդ ես սպանում, ուզում ես մարդասպան լինել:

— Արժանի չե ես սպանում եմ.

— Բաթիր, քեզ սաղական չի այդ. չեմ քաշիր, ձեռքդ: Ամբողջ թեմը քեզ ե նայում, քեզնից որինակ վերցնում. դու վոր մարդ սպանես. ինչ պիտի ասեն նրանք բոլորը, չե՞ վոր ներանք ել ավելին կանեն:

— Վոչ, սպանվելու արժանին՝ պետք ե մեռնի, ո՞վ ինչ ուզում ե՝ ասի:

— Խանչալդ չեմ քաշիր, Բաթիր, դիր պատյանը, մի մոռանա, վոր դու իմ ցանկությունների, իմ մտքերի արտահայտիչն ես ու դորձադրողը. չես ուզում եմ քո մեջ նոր մարդ տեսնել. ամբողջ թեմում առաջնություն տալ քեզ, մինչդեռ դու ուզում ես անել այն, ինչ վոր շատ ուրիշներն են անում...

Կրժքին մոտեցրած խանչալը կանգ առավ: Մտածում եր սպանել, թե՞ վոչ: Նայում եր Բաթիրը գիտակցությունը կորցրած Դևային ե նրա աչքերի մեջ կարդում եր «մեղայական»:

Մեջքն ուղղեց, խանչալը դրեց պատյանը ե նրա դեմքը սովորական խաղաղ արտահայտություն ստացավ, ապա կոացավ, վերցրեց Գեալի խանչալը, մեկնեց նրան ու. ասաց.—

— Գնա, տար խանչալդ. վո՞չ մի տեղ, վո՞չ մի խոսք այս մասին, վորպեսզի դեթ ամոթով չմնանք:

Ջալրացած, ստորացած, վրեժխնդրության ծարավով հաղեցած՝ հեռացավ այդ որհասական վայրից Գեան: Գնում եր նա, բայց զայրույթը խեղդում եր նրան, թուլնեցքով զարկում եր իր կրժքին, անիծում իր սե որը:

Այնուամենայնիվ նա սպառնում եր:

* *

Այդ որը նցերի թեմում արտասովոր լերեկո պիտի լիներ. թեև արևը սովորականի նման թեքվելու յեր լեռներից այն կողմ յերեկոն խտանալու յեր մանիշակազույն ճառագայթներով, լերկնակամարն աստիճանաբար թտնձրանալով պիտի խավարեր, սակայն թեմի ժողովրդի աչքերին սովորականի նման քուն չեր գալու, խաղաղ ու հանգիստ գիշեր չեր լինելու. այլ ել ավելի

պիտի կենդանանար, եւ ավելի շարժուն կշանք պիտի ստեղծվեր այնտեղ:

Բոլորն իմացան, վոր այդ որը ամբողջ Սվանեթիայում առաջին անգամ ռազմի պիտի կառուցվի և բոլորը պիտի լսեն Թիֆլիսի հաղորդագրութունը: Այս լուրը տարածվել եր նաև շրջակա գյուղերում, վորոնք իրենց հերթին՝ փոքր ու մեծ շտապել ելին այս հանդիսավոր լերեկոյին ներկա լինելու:

Ռադիոն կառուցվելու լեր ակումբի ընդարձակ բակում. այստեղ պիտի հավաքվեր տեղական և շրջանի հասարակութունը և ակնաստեղ լիներ ինչվոր արտասովոր մի լերեկոյթի:

Ուրախ ելին շտաբեր. սակայն ժողովրդի մի մասը չեր հավատում, կասկածանքով եր նայում տարածված լուրերին, և ռադիո կոչվածի մեջ տեսնում եր ինչվոր սատանայական, անհայտ քաջքերի կատարած մի գործ:

Բաթիրն առավոտովանից անցել եր գործի, զննում—նայում եր ապարատը, կարգի բերում և կանոնաւորում, վոր հանկարծ ամօթով չմնա և առաջին փորձը հաջող անցնի, տպավորութուն թողնի:

Այս անվերջ աշխատանքի մեջ որն անդգալի անցավ, արևն արդեն թեքվում եր դեպի արևմուտք. վերջին հրաժեշտն եր տալիս Կովկասյան լեռների բարձր գագաթներին:

Մութը կամաց-կամաց համատարած եր դառնում. ժողովուրդը քանի գնում շատանում եր: Ակումբի բակը լեցված եր անհամար բազմությամբ: Աղմուկ, իրարանցում. ժխոր ամենուրեք. բոլորը սպասողական վիճակի մեջ՝ լարված նայում ելին բակի դռանը և բան չելին հասկանում. անհամբերութունից սիրտները տրոփում, անհանգիստ շարժումներ ելին անում:

Աբաշխան ևս այստեղ եր. միթե նա կարող եր չլինել, քանի վոր գործն ամբողջովին ղեկավարում եր Բաթիրը: Մեզ «հայտնի» դեպքից հետո Բաթիրի պայծառ դեմքը շարունակ կանգնած եր նրա աչքերի առջև:

Յերեկոյացավ: Ակումբի դռանը լերեաց Բաթիրը. նրա դեմքը փալում եր լուսնի և աստղերի լուսի տակ, քաղցր ժպիտով ընդհանուր հայացք ձգեց ներկա յեղողների վրա և կանգ առավ դռան մոտ: Նրան հետեց մի ուրիշ լերիտասարդ՝ հեքիաթային մեքենան ձեռքին:

— Ընկերներ, այժմ Թիֆլիսից ձայներ են լսելու, — դիմեց Բաթիրը ներկա յեղողներին, ապա հարձավ մեքենան ձեռքին

պահած յերիտասարդին Լուսթյուն ընկավ. բոլորն էլ լսողություն եյին դարձած:

Բերանաբաց խողովակի մեջ լավեց ինչվոր տարորինակ խոխոց, բառերը չեյին ջրկվում. աղմուկ, տարորինակ ձայներ, ներկա չեղող հասարակությունն ականջները սրած՝ ուղում էր բան հասկանալ, սրտները ճաքում էր, բան չեյին հասկանում:

— Ա՛յ քեզ ուղիտ...

— Յերեւի սրանց խելքով, ես խոխոցը խոսել ե նշանակում...

— Յերկաթներն իրար քսելով՝ խոխոցնում են, ուրիշ վոչինչ...

Անհամբեր ամբոխի միջից լսվում եյին հեղնական բացականչություններ. և այդ բացականչություններից ամեն մեկը— խոցում— վիրավորում էր Բաթիրի սիրտը. Նա լուռ էր. ձայն չէր հանում, սակայն իր մտքում կրկնում էր հետևյալ բառերը.— «Մի փոքր սպասեք. համբերություն ունեցեք, չուտով բառերն ու խոսքերը նույնպես հասկանալի կդառնան ձեզ համար»:

Ճիշտ վոր, միքանի վալրկյան հետո ուղիտի խողովակի միջից արդեն պարզ հասկանալի եյին լինում հետևյալ խոսքերը.— «Լսեցեք... լսեցեք... բոլորին... բոլորին...»

Լռեցին բոլորը. քար լուսթյուն էր ամենուրեք. աչքերը լայն բացած, ունքերը վեր քաշած՝ դարձել եյին լսողություն: Ջարմանքից ապուշ եյին կտրել. Յերկաթը ճիշտ վոր սկսեց խոսել. նրանք շատ լավ լսում եյին «Լսեցեք, լսեցեք» բառերը:

Բաթիրի դեմքին ուրախության Ժպիտ անցավ, ճակատը բացվեց, աչքերն սկսեցին փայլել. Ռադիոն արդեն գործում էր: Կանգնած էր ապարատի մոտ և հրճվում էր իր հաջողությունից, շարունակ մտքի մեջ կրկնելով - «այժմ ել պիտի կըրկնեք ձեր ցնորամտությունները, թե՛ չերկաթների խոխոց և ուրիշ վոչինչ, թե խաբեքսություն ե, և այլն»...

Բոլորի համար շատ պարզ ու հասկանալի բերանաբաց խողովակի միջից լսվում եյին բառեր, խոսքեր. ամենքն ապշած նայում եյին ապարատին և զարմանում. տեղ-տեղ միայն ծիւղ-նիններն եյին, վոր մրթմրթում եյին քթների տակ, չեյին հավատում. նրանք իրենց բովանդակ կյանքում չերեք չեյին լսած նման բան, չերեք չեյին տեսած այս տարորինակ մեքենան:

— Յերկաթն ինչպե՛ս կարող է խոսել, չե՞ վոր յերկաթը մեռած մարմին ե...

— Սարսափելի բան են բերել մեր թեմը...

Մի ակնթարթում բոլորը հարցական նշան դարձած ու սարսափած նայում էին իրար, աչքի բերերը լաֆն բացած, և ասեկոսեկներ եր, վոր ծավալվում եր աջ ու ձախ...

Բաթիրը հանգիստ կանգնած ժպտում— ծիծաղում եր հայտնած կարծիքների վրա և ուշադրություն չեր առնում, վոր ամբողջի մեջ քանի գնում ծավալվում— խորանում էին ռադիոյի մասին թյուր հասկացողութունները:

Ռադիոն դործում եր, նա շարունակում եր խոսել ամբողջի հետ:

— Չար վոգի չե նստած խողովակի մեջ. սատանաներ ու քաջքեր են խոսում նրա մեջ, — գոռաց մեկը բարձր ձայնով և այդ գոռոցին հետևեց սոսկալի աղմուկ, իրարանցում:

Բաթիրը սթափվեց, շփոթվեց. լոնց և ամբողջովին լսողություն դարձավ. զգաց, վոր աղմկողը, վերջին բացականչոյն իրեն շատ ծանոթ ձայն եր, բայց գլխի չեր ընկնում, թե ով պիտի լինի այդ վատհոգին:

Դժգոհությունն աճում եր. կարծես մեծամասնությունն արդեն հավատում ու համոզված եր, վոր խողովակի մեջ իրոք վոր չար վոգի չե բուն դրել և սատանաներն ու չարքերը խոսում են նրա միջից:

Թեմի ժողովրդին շատ լավ եր հայտնի, վոր իրոք աշխարհումս գոյություն ունեն փոքր ու մեծ սատանաներ, դրանց մեջ կան նաև ոյնալիսիները, վորոնք անտեսանելի յեն մարդկանց աչքին, բայց խոսում են մարդկային լեզվով:

— Սատանաներ են, չարքեր են խոսողները:

— Թեմի ժողովրդի համար վտանգավոր ու վնասակար բաներ են բերել:

— Մաքրենք, հեռացնենք մեզնից:

Լավում էին ողի մեջ բարձր գոռոցներ. իսկ այդ ձայների մեջ մեկը չափազանց ծանոթ եր թվում Բաթիրին: Նա լուռ եր ձայնը կտրվել եր. նա տեսնում եր ըմբոստացած ամբողջ թեմի ժողովուրդը և ձայն հանել չեր համարձակվում:

— Շահիմար...

— Շահիմար...

Գոռում էին բոլորը, բուռն քնները շարժում ողի մեջ և կատաղած ամբոխն ալիքանման շարժվում եր առաջ, մոտենում իր ապարատին — սատանաները վռնչացնելու համար:

Բաթիրը ֆնացել էր շվարած. հազար ու մի մտքեր էլին անցնում նրա գլխով. հազար տեսակի բառեր ճնշում— խեղդում էին նրա կոկորդը. սակայն կանգնած էր անշարժ. ձայն հանել չէր համարձակվում. խառնաշփոթ բառեր էր լսում, շատ անգամ անհասկանալի, բայց տեսնում էր, թե ինչպես հուզված ամբողջ ալիքանման շարժվում էր առաջ, բռունցքները շարժելով ողբ մեջ և սպառնալիքներ ուղղելով անհայտ մարդկանց հասցեին։

Լսվեց հանկարծ մի պարզ և վորոշ հայտարարություն.

— Զարդենք, փշրենք խոզովակը։

Յեւ ամբողջ, վորպես մի մարդ, շարժվեց, ալեկոծվեց...

— Բաթիր, Բաթիր...

Շվարած Բաթիրը սթափվեց։

— Բաթիր, ի՞նչ ես շվարած կանգնել. չե՞ս տեսնում ժողովուրդը պատրաստվում է ռադիո-ապարատը ջարդելու։

— Հետո, չես ի՞նչ կարող եմ անել. միթե կարող եմ այս կատաղած ամբոխի առաջն առնել։

— Քո տեղն է, Բաթիր, մի մոլորվիր շատ հարմար ժամանակ է, ոգտվիր հանդամանքից և խոսիր անտախալաշտությունների և անահավատությունների դեմ։

— Վրչ, չես այդ չեմ կարող անել։

— Ինչպես թե չես կարող անել, չե՞ վոր հավատում ես, վոր ինքդ արդար ես։

— Հավատում եմ, բայց...

— Եւ ի՞նչ բայց...

— Ամբողջ թեմն և հուզված, բոլորն են դժգոհ, ի՞նչպես կարող եմ չես ամբողջ թեմի դեմ գնալ։

— Քո մեջ դեռ իշխում է տրադիցիան. հին սովորությունները, Բաթիր, ամոթ է, սթափվիր. անձդ զոհաբերելու գնով պիտի փորձես համոզելու և հասկացնելու տգետ ամբոխին իսկական ճշմարտությունը...

Բաթիրն այս խոսքերի տղեկցություն տակ՝ հանկարծ ըսթափվեց, թռավ ամբոխնի վրա, արծվի նման ընդհանուր հայացք ձգեց կատաղած ամբոխին, բռունցքը շարժեց ողի մեջ և սկսեց.—

— Ո՞վ է մեկը ձեր մեջ, այդ խառնակիչը, վոր փորձում է խանգարել ամբողջ թեմի հանրագուտ գործը. ո՞վ է այդ խառնա-

կիչը. չերկաթի մեջ ի՞նչպես կարող են սատանաներ ու չարքեր
բուռն դնել. միթե դա խելքի մոտիկ բան է:

Ամբոխը լռեց, խաղաղությունն ընկալւ: Մի վայրկյան առաջ
այդ ամբոխը, վոր պատարաստ էր ամեն ինչ փշրելու, այժմ ան-
սովոր հանդարտությամբ լսում էր հռետորին:

Համատարած լուսթյունն ազդեց նաև Բաթիրի վրա. նա
յնլ լռեց: Նա դդաց վոր հաջողությունն իր կողմն է, արդեն կա-
րողացել է տիրել ամբոխին. սակայն մի վայրկյան միայն մնաց
նա այդ վայելքի մեջ, քանի վոր ամբոխի մեջ նորից լսվեց ծա-
նոթ ձայնը. —

— Շնչիւմ...

— Շնչիւմ...

Յեւ ողի մեջ շարժվեց մի ձեռք՝ բռունցքին պինդ սեղմած
մի քար, բուժ մատը սպիտակ շորով փաթաթած:

Քարը շարժվեց և կպավ ուղիղ Բաթիրի ճակատին. արշուն
ակսեց հոսել նրա դեմքից. ուշաթափ ու թուլացած մի քանի
քալլ արավ յետ և հենվեց մի ծառի:

Թեմը վորոտում էր, քարեր ելին նետում աջ ու ձախ, ջարդ
ու փշուր ելին անում ամեն ինչ, ջարդ ու փշուր էր լինում նաև
ռադիոն:

Քարերը զարնվում ելին ոռդիո-ապարատին, իսկ Բաթիրը
կանգնած մեկուսի՝ շվարած, գգում էր, վոր քարերից յուրա-
քանչյուրն ամեն անգամ զարնվում էր իր սրտին, զարնվում էր
իր մտքին, իր վողջ հյությանը, նրան թվում էր, վոր իրեն են
քարկոծում:

Նալում էր խելակորույս, նալում էր դառնացած և հազար
ու մի մտքեր ելին անցնում նրա գլխով:

Հուզված ամբոխի մեջ, հազիվ նկատելի կերպով, նշմարեց
Աբաշխալին, վորի այտերից թափվում էին արցունքի կաթիլ-
ներ, և վորը մի վայրկյան անգամ աչքը չեր հեռացնում Բաթի-
րի արշունոտած դեմքից:

Տանջվում էր Բաթիրը, կանգնած հուսահատ, իսկ գլխի վը-
րայով լողում էին շարժված քարերը, վորոնք գալիս զարնվում
ելին ոռդիո-ապարատին, վորն այնքան դժվարություններով ու
տանջանքներով հազիվ հաջողեցրել էր բերել տալ նցերի թեմի
համար, վորի հետ կապված էին զեղեցիկ ապագա— լավագույն
ապասելիքներ:

— Բաթիր, ի՞նչպես ես: Բաթիրը դարդոտ ու հուսահատ շարժեց ձեռքը և լուռ նշաններով հասկացրեց իր դառն կսկիծը:

— Վոչինչ, Բաթիր. պարտակտնությունդ լիովին կատարել էս դու. վաղ թե ուշ, միևնույն է. թեմի ժողովուրդը զիտակցելու չե, հասկանալու չե իր սխալը և վերջիվերջո գլխի կընկնի և կըմբռնի, թե ի՞նչ է ուղիոն:

— Գիտե՞ս ինչ, առաջին քարը, վոր դիպավ ճակատիս, դա Գեվալի նետած քարն էր. նա չե աղմկել ու հուզել ժողովրդին. այս բոլորը նրա սարքածն է:

— Յեթե այդպես է, ավելի լավ. նշանակում և ուղիոն ջարդվել է անձնական հաշիվների հողի վրա:

— Շատ եմ ցավում, վոր լսեցի քեզ և չսպանեցի, չեմ բխեղճացած գտնվում եր իմ ձեռքին: Հո տեսնո՞ւմ ես, թե քո պատճառով ինչ որեւ քաշեցի չես, ի՞նչ դժբախտություն յեկավ վրաս. — ասաց Բաթիրը և ձեռքը մեկնեց դեպի ջարդուփուր լեռնած ուղիո-սպարաառ:

Իսկ դեմքից հոսող արյանն ուշադրություն չեր դարձնում:

— Իմ բարեկամ, սիրելի Բաթիր, դու միակն ես ամբողջ թեմում, վորպես նոր կյանքի — նոր մարդ, վոչ խելքդ և ուշիմությունդ է պակաս և վոչ ել աղամարդությունդ:

— Նաչիր, տես Արաշխային. հո տեսնո՞ւմ ես նրա արեւի նըման պայծառ դեմքը. սիրտը մաքուր ու զուլալ. կնության պետք է տամ քեզ, համաձայն ես:

Բաթիրը գլուխը կախեց և ուշադրությունը կենտրոնացրեց մի նվիրական տեղի, վորտեղ դժադրված էր Արաշխայի սքանչելի դեմքը:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Լեռան լանջին փարթամորեն փռված և Շավեթ գյուղը. դեղեցիկ կապուտակ ու ջինջ և նրա յերկնակամարը, կանաչկոտ են նրա շրջանակները: Մերթ ընդ մերթ արեը, ճամպան կտրած ջերանի նման, սլանում և Շավեթ գյուղի մույլ լեռների վրայով և կարծես ապաստարան և զտնում Շավեթի յերկնակամարի վրա— նրա գեղեցիկ ճակատին:

Մինչ արևի անցնելը՝ խալտարդետ բլուզները հագին՝ գյուղի յերեսխաները, խաղում-վազվզում են մերկ լեռների լանջերին, նայում են հեռուները՝ գյուղին, դաշտերին ու շրջականերին և նրանց թվում և, թե ամբողջ աշխարհը հենց այդ և, ինչ նրանք տեսնում են. նրանք հավատում են, վոր ա-խարհն սկսվում և Արծվի լեռան մոտերքից և վերջանում արևոտ որբերին, պսպղացող ճառագայթների տակ, հեռվում հագիվ նշմարվող լեռան սառցապատ գագաթով:

Աշունքին բնութիւնը դեղնում—գալկանում և, ծառելի, թփերի, ծաղիկների տերեւները չորանում, կծկվում, թափվում են, սակայն նույն աշունքին գյուղը լիքն և խաղողի առատ վողկուլզներով, քաղցր ու թթվաշ բուրավետ խնձորներով, մարդկային արյունը յեռացնող—պղտորող մաճառով:

Սկսվում և սիմինդի (յեգիպտացորենի) քաղը և չորացած խոտերի հունձը—աշխատանք աշխատանքի յետևից հաջորդում և, գյուղացիները գլուխը կորցրած՝ դես ու դեն են վազվզում, ձմռան պաշար ամբարում:

Կածաններ ու սալերի ճամպաներ, վորքան ասնա և վոր կողմից ասես մանում են գյուղը:

Այդ ճամպաներով ու կածաններով գալիս են մարդիկ հեռու ու մոտիկ տեղերից, մեծ մասամբ գյուղին անծանոթ ճամպորդներ:

Գյուղի ծայրերին՝ ալսաեղ-ալսեղ խումբ-խումբ բարձրացել են հսկա ընկուզենիները և նրանց ճյուղերի ու տերեւների մեջ անվերջ խրախճանք սարքած՝ դես ու դեն են ցատկոտում

գիշերվա նման սև ագռավները, և գիշեր-ցերեկ ծառերից թափում հասած ընկույզները:

Ամեն առավոտ, ագռավից ավելի սև փարաջայի մեջ փաթաթված, ջրուռ վրա նստած, տկտկալով՝ դեպ լեկեղեցին և շատապուժ թեոֆանե քահանան, վորի զլխին ընկուղենիների տակոֆե անցնելիս՝ ընկնում են ժայռերից թափվող ընկույզները, զգուժ և նրանց պատճառած ցավը, նախում և վեր՝ յերկինք-աստծուն կասկածոտ աչքերով:

Առաջներում լեկեղեցու զանգակները զողանջում էին գիւ ձայնով, ձայնն արձագանքում, տարածվում և վողջ գլուղի մեջ և շարունակ զգալ տալիս բոլորին յեկեղեցու գոյությունը:

Սակայն մի որ, հանկարծ գլուղում լուր տարածվեց, թե ինչ-վոր հրաշքով յեկեղեցու դմբեթից անհետացել և խաչը Մինչ-դեռ, նույն որը թեոֆանե քահանան զայրացած մտնում և տուն ինքն իրեն խոսելով.—

— Ես ի՞նչ դժբախտություն և, եսպես ել անիրավ յերկիր կլինի, իրենք անաստված, վոչնչի չեն հավատում. ու քեզ ել սատանի ընտանիքից են հաշվում, եսպես ել ջահլնեք կլինեն, եսպես ել անպատիվ մարդիկ կլինեն...

Թեոֆանե քահանայի այս զայրացկոտ խոսքերն ամենից շատ ուղղված էին Ջամբիլ անունով մի յերիտասարդի հասցեյին, քանի վոր նրան ելին համարում յեկեղեցու դմբեթից խաչ թռցնողը:

Ջամբիլը գլուղի քաջ ու անվախ յերիտասարդներից էր, յերկու շաբաթ և, ինչ վերադարձել էր զինվորությունից՝ իր հետ բերելով ռազմիկին հատուկ անձնագործությունը: Նա իրեն շատ հանգիստ ու անտարբեր էր զգուժ դեպի յեկեղեցին դեռ այն ժամանակ, յերբ գլուղացիությունը յեկեղեցու շուրջը խլամբված և նրանով տարված՝ տարիների ընթացքում առանձին ջերմեռանդությամբ լիզում էր նրա քարքարոտ պատերը, նրա մամռակված քարերն ու անկյունները:

Յեվ այսպես ամեն որ, յեկեղեցու բակն էյին հավաքվում կանաչք, ծերունիներ, շփոթված ալալված խոսում ելին իրար հետ, բամբասում սրան-նրան և ուշ յերեկոյին միայն, յերբ խավար գիշերն իջնում էր գլուղի վրա՝ ցրվում էին իրենց տները:

* * *

Լուսադավ:

Պայծառ ու արևոտ յեղանակ եր. արևոտ ու վառ տրամադրութեամբ քնատեղից վեր կացավ նաև Զամբրիլը. շտապեց ընկերոջ մոտ աչն ժամանակ, յերբ վերջինս դեռ պառկած եր անկողնում, ներս ընկավ սենյակը, մոտ վազեց ընկերոջ անկողնուն և ուրախ ձայնեց նրա ականջին. —

— Նիկո, գիտե՞ս ինչ.

— Ի՞նչ...

— Մենք պետք է մի ներկայացու՞մ կազմակերպենք, թատրոն խաղանք:

— Ներկայացո՞ւմ... թատրո՞ն... Ի՞նչ բան է թատրոնը, — անսպասելի հանկարծ հարցեց Նիկոն և կամաց-կամաց, ձանձրուլթով վեր կացավ անկողնուց ու սկսեց տրեխները վորոնել:

— Յես կսովորեցնեմ քեզ, թե ինչ է նշանակում թատրոն խաղալ. բանակում յեղած ժամանակս միշտ տալիս ելինք ներկայացուցներ, նույնպիսի թատրոն ներկայացում ուղում եմ այստեղ կազմակերպել:

— Շատ լավ, արի կազմակերպենք, — վճռականորեն պատասխանեց Նիկոն, թեևրը վեր քաշեց. շարժեց աջ ու ձախ, փորձեց իր ուժերը, կարծես պատրաստվում եր ինչ-վոր ծանրություններ քաշելու:

Յերկուսով միասին տնից դուրս յեկան:

Զամբրիլը ճանապարհին մտածում եր, թե վճռեղ կազմակերպի ներկայացումը, ի՞նչ ներկայացում — ի՞նչ պիեսս խաղան. իսկ Նիկոն քուրբովին գլխի չեր ընկնում թե՛ վերջի վերջո ինչ է լինելու նրանց արած գործը, թեև համաձայն է, քանի վոր համարում է իր ընկերոջը:

Ամբողջ ուր նստած մտածում ելին թե ինչպես անեն, վոր իրագործեն իրենց մտադրությունը: Յերկար լուռությունից հետո Զամբրիլն ուրախացած բացականչեց. — յեկեղեցում պետք է կազմակերպել, նրանից լավ տեղ չ'ա. եդ է վոր կա:

— Յես ել ելի այդ մասին մտածում, իհարկե յեկեղեցում լավ է, մանավանդ վոր, դրանով Թեոֆանե քահանային ել կբարկացնենք, — համաձայնվեց Նիկոն և դոշ տված՝ կանգնեց նրա առաջ:

Ամբողջ գյուղում թատրոնական վորեւ գրվածք չգտան ի՞նչ

անհն: Զամբիրը վորոշեց գրել հեղափոխական բաժանդակութեամբ մի պիես:

Ամենից առաջ գրեց մի մեծ աֆիշտ և փակցրեց յեկեղեցու պատին՝ մուտքի դռան մոտ:

Աֆիշի վրա գրված էր հետևյալը.—

«ԸՆԿԵՐՆԵՐ,

Մեր ակումբում, կամ յեկեղեցում շուտով կազմակերպվելու յե մի ներկայացում, բեմագրվելու յե Զամբիրի հեղինակած նոր պիեսան, Հասարակութունից խնդրվում է սոմսակներ ձեռք բերել. սոմսակները կարող եք ամեն մեկդ ձեռք բերել կասսայում, Պռահց սոմսակի վոյ, վոքի յե՛ն քողակում քառոց, Թասոցը լինելու յե հոկտեմբերի 20-ին, նոր սքիւով, յերեկոյան ժամը 8-ին:

Հարգանքներով պիեսի հեղինակը.

Խնդրում եմ ներկայացման ժամանակ վոյ ծխախոտ յե՛վ վոյ ել յիբուխ յծխել:

Ներկայացման լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ գյուղում. գյուղացիներից վոյ վոք գաղափար չունեի թատրոն ասած բանի մասին և դրա համար ըլլորն էլ սրտատրոփ սպասում էլին հոկտեմբերի 20-ին:

— Խնչպես կարելի չե չեկեղեցի մտնել, յերբ քահանան աշխտեղ չի:

— Դե ի՞նչարկե, մի և իմանում, ինչ կպատահի:

— Խնչ պիտի ցույց տա... Եղ քնձոռտ լակելը...

Սակայն սրանք զլխներին թաշկինակներ կապած կանաչք ելին և գլուղի ծիրունի-աղսախկալները, յերիտասարդներն ու պատանիները մեծ անհամբերութեամբ և ուրախութեամբ սպասում էլին ցանկալի որվան:

Որերն անցնում էլին որերի յետևից. մոտենում էր հոկտեմբերի 20 ը. Զամբիրը անընդհատ աշխատում էր. հավաքել իր շուրջը գլուղի աղջիկ ու տղաներին, սովորեցնում-վարժեցնում էր նրանց և միաժամանակ շարունակում պիես գրելու աշխատանքը:

— Ծշմարիտ։ Ասե՛ք, ասե՛ք, յես ձեզ լսում եմ։

— Այս գիշեր պետք է հրդեհվեն Զադեսի բոլոր շինքերը. վորոշված ե կրակ տալ, վոչնչացնել բոլոր նորակառույց շինքերը, ժամը 12-ին առաջին բոցը պիտի բարձրանա ողի մեջ։ Այս շինքերում ապրող չերիտասարդներից մեկին հանձնարարված է այդ գործը կատարել։ Ամեն ինչ պատրաստ է։ Այնտեղ, վորտեղ փայտեղին է դարսված, ամենուրեք շաղ և տված նավթ ու բենզին։

— Մասնակցողների ազգանունները։

Քննիչը դրեց բոլորի ազգանունները, զանգահարեց, պահակը ներս մտավ։

— Տասնհինգերորդ կամերան, ապա դառնալով Դավթին,— մնացածը հետո։

— Ուղի՜ւմ եք մի բան գրել, — մի փոքր հետո հարցրեց քննիչը,

— Ուրախութեամբ:

Դավթին դուրս տարան:

Ներս մտալ գեղեցիկ հագնւած մի յերիտասարդ, խոսելու ժամանակ նշմարվում էին նրա սպիտակ մարդարիտներէ նման խիտ-խիտ շարված ատամները, վորոնք նրա թուխ դեմքին տուրիս էին գեղեցկութուն:

— Ի՜նչ արիր, — հարցրեց նա:

— Զգվելի մարդ ե յերևում:

— Ի՞նչպես...

— Մատնեց բոլորին մի ժամվա մեջ ամեն ինչ խոստովանեց: Նման մարդկանց վրա վստահելը առհասարակ չի կարելի, մեզ ել հեշտութեամբ կարող ե ծախել: — Զգվանքով արտասանեց քննիչը: Ապա բռնկեց թերթիկի վրա ինչ վոր մի բան մակագրեց, հանձնեց յերիտասարդին և ասաց.

— Նոր պարտավորութիւն...

ՅԵՐՐՈՐԴ ԳԻՇՆԻ

Յերեկը խորասուզվեց իրիկնային մթութեան մեջ ծանր բռնան նման:

Զափազանց ծանր ու դանդաղ սահում էին վալրկյանները, տանջանքով ու ցավով ծանրացած ու խորունկ դրոշմ թողնելով անցնում էին Շավարշի ճնշված կրծքի վրայից:

Յերկու աշխարհերի, յերկու դիշերի նման նրա ճակատի խորունկից նայում էին հաղիվ նշմարվող աչքերը: Այտերը կարծրած էին, սակայն դեմքը և ճակատը՝ դեղին դեղին ծաղկի նման:

Համալի ֆիտիլը բարձրացել էր, ծխում էր. մուրը բարձրանում էր վեր և տարածվում սենյակի ալս ու այն կողմ:

Մտածմունքներով բեռնավորված՝ անշարժ պարկած էր իր անկողնում:

Համարում էր որբերը և այսոր լալ գիտե Շավարշը, վոր իբրորդ դիշերն և արդեն, ալս դիշեր հրդեհելու վերջին ժամկետն է:

Ժամանակը խիստ դանդաղ էր անցնում:

Ժամացույցը զարկեց տասը, տասն և մեկը: Սկսվում էր նաև տասներկույրորդ ժամը, Շավարշի սիրտն ու միտքն էլ սկսում էր անհանգստանալ:

Նրա ուղեղը տաքութիւնից կարծես ալրվում էր: Աչքերի

առաջ յերևում եյին հաղար ու մի տեսակ քաղցր ու դուրեկան ապրումներ, նշմարվում եյին ու վերհիշում գեղեցիկ տեսարաններ, սակայն չէր կարող լերկար այդպես հանգիստ պառկել Հանձնարարությունը պետք է կատարի. գեթ մի անգամ, մահ. վաճառք առաջ պիտի հազենա կրակի, հրդեհի գեղեցկությամբ...

Շուռ ու մուռ եր գալիս անկողնում... անհանգիստ եր... հուզվում եր մերթ ընդ մերթ...

Վեր ե կենում... ծնկները ծալվում են, ճիգ ե անում, հա-
վարում ե վերջին ուժերը և հեռանում անկողնից: Վաղում ե, սակայն դժուար է, վոր իր սենյակը վաղում ե իր լիտեից, վա-
ղում են նրա լիտեից անկողինը, բարձր՝ կեղտոտ ու դեղնած, բայց նա լիտ չի նայում, վաղում ե միայնակ, գլխապատառ, սիրտը վոտքերից արագ ե անցնում, բայց և այնպես գոհ չի իր արագ վաղքից:

Կախարան: Սուրից լերկաթուղին և վշտոցով անցավ յերկաթ-
գծի վրայով, սիրտն սկսեց ավելի արագ զարկել:

Շավարչն ել ալստեղ ե և, պատրաստ, թռավ դեպի գնացք,
գնացքը շարժվեց, հազիվ կարողացավ բարձրանալ վագոններից
վերջինը: Նստեց վագոնի սանդուխքներին և գնաց գնացքի հետ
միասին:

Ճանապարհին.— Լեռներ, ձորեր, հոսող գետեր ու ջրեր, իսկ
վերևում լերկնակամարն եր անբաժան ամպերով, լուսին, աստ-
ղեր:

Սահում ե ժամանակը, սլանում ե նաև Շավարչը:

Մի վայրկյան գնացքը կանգ առավ Զագեսի մոտ, ապա
վերկին վշտաց, շարժվեց ու գնաց յերկաթգծի ուղղությամբ:

Շավարչը ցած թռավ: մոտենում ե դեպի շենքեր տանող
ճամպին:

— Ո՛վ ես... կանգնիր,— բարձր ձայնով կանչեց պահակը:

— Յես եմ և ցույց տվեց իր վկայականը: Արձակուրդիս
ժամանակը լրացավ, վաղվանից սկսում եմ աշխատանքս:

Պահակը ճանաչեց Շավարչին, բարեկեց, ժպտաց և ճանա-
պարհ տվեց:

Շավարչը նորից սկսեց վաղել: Մոտեցավ տախտակների
պահեստին, կրակն այստեղից պիտի սկսվեր:

Ներս սողաց պահեստը, ամեն ինչ գննեց և տեսավ, վոր
ամեն ինչ սարքին-կարգին ե:

Նավթ շաղ տված տախտակները սպասում են միայն մի
փոքրիկ լուցկու:

Լուցկին վառեց Շավարշը, մոտեցրեց նավթոտ տեղերին և ինքը գուրս թռավ պահեստից: Վաղում և դեպի Գուռ գետը, բարձրանում և կամուրջը և կանգ և առնում այնտեղ թևերը տարածած:

Սպասում և բոցավառվելուն:

Ճիշտ վոր կարճ ժամանակից հետո պահեստի անցքից սկսեցին յերևալ ալ-կարմիր լեզվակներ:

Պատերից այս ու այն կողմը թափվեցին ոճի նման դալար-վող կարմիր-ալ բոցերը և կրակի բռնեցին հարևան շենքերին:

Կանգնած և Շավարշը և նալում և կիսոված տախտակների կողմը:

Կրակի բոցով բռնվում և ամբողջ տարածութունը, հրդեհը լափում և շինությունները, կամուրջները, փայտեղներ և ամեն ինչ:

Շարժվեցին հաղարավոր բանվորները և փախչում ելին Զագեսի շրջականերից, դեն են շարժում գործիքները, քլունդները, բահերը և վաղում են սարսափած, դողդողալով:

Բնակիչները սենյակներից գուրս թռան, նրանց ցավի ու տանջանքի ձայները խլացնում են վողջ բնությունը, լեռ ու դաշա, ձոր ու հովիտ:

Հրդեհը ծավալվում և, ալ-բոցերը դեպի յերկինք են հասնում: Կարմիր բոցերը գունավորում են լուսնի լուսով սպիտակած ամպերը. կարմիր արջան գուլն են ստացել շինությունների կամարները:

Վիթխարի քանակությամբ թանձր գոլորշին, համատարած խեղձուցիչ ծուխը բռնել և ամենուրեք: Հսկա հրդեհի բոցերը բարձրանում են մինչ յերկինք: Կրակի կայծերը թափվում են ցած. գետին և դաղում հողն ու մարդկանց:

Կանգնած և Շավարշը, նալում և արբենում «սքանչելի դեղեկությամբ»:

Այս տեսարանը ուրախացնում և նրան, բարձր գոռում և ու կանչում. —

— Արդեն մեռնելուս ժամանակն և... այժմ արդեն կմեռնեմ...

Մեկը դրսից թակում և Շավարշի սենյակի դուռը: Դռան թխկոցը նա լսում և ինչ վոր հեռուններից, շատ խուլ ու անոռոշ:

— Յերանի իմանամ, ի՞նչ են ուղում ինձնից, — ասում և ինքն իրեն նա մտքերի յետևից ընկած:

Իսկ դրսում դռան թրխկոցը դեռ շարունակվում և:

Վոչ վոք պատասխան չի տալիս:

Միքանի մարդ դուռը բացին և ակամա կանգ առան հենց դռան մոտ:

Լամպը շուռ եր լեկել և սեղանից ծուխ եր բարձրանում: Սեղանը վառվում եր և կարմիր ալ-լեզվակները խաղում էին ողի մեջ:

Սեղանի առաջ ծնկներ-ծալ ընկած եր Շավարշը: Բերանից դուրս ժայթքած արևունը ներկել եր պատը, հատակը և նրա վողջ դեմքը:

Մնացին անշարժ կանգնած:

Հրդեհ ծագեց փոքրիկ ուղեղում:

Փոքրիկ ուղեղն այրվեց, վոչնչացավ...



ՅԵՐԿՈՒ ԱՐԵՎ

Որը մթնում եր: Գիշեր եր արգեն:

Թանաքի նման սև, անհատակ ու անբովանդակ խավարն իջել պատել եր և հսկա լեռներին, և անտառապատ բլրակներին, և ստվերաշատ անտառներին:

Լեռներին բազմած փոքրիկ չերկնակամարը հազիվ եր նըշմարվում իր գունդգուլն ամպերով, վորոնք ազոտ կերպով փայլում եյին կոճականման այս ու աչնտեղ ցրված աստղերի լույսով:

Նոր բարձրացող թեթև քամին հազիվ եր շարժում դեռ ևս չերեկ կազդուրված ծառերի տերեակալած մատղաշ ճյուղերը:

Սաղաղ ու հանգիստ եր ամեն տեղ...

Աստղերն ընկնում, վայրկենապես չերկնակամարի վրա իրենց յետեից թողնում եյին մի պայծառ գիծ, վորոնք գալարվում, կորչում եյին անհունության մեջ:

Ավելի խորը՝ ձորի միջում, հեռվից լսվում եր մի խուլ շառաչում:

Քուռ գետն եր այդ, անջնաս ու խելոք, վորպես մոր ազիզ զավակ, սակայն սրտնեղած՝ հոսում եր ժայռերի միջով, ուր Ավճալան *) մեկնված բարձր լեռների լանջերին՝ միշտ անքուն վորպես արթուն պահակ ունկընդրում և լուռ այդ կյանքի ձայնին:

Քուռ գետն և այդ, վոր քանդում, մաշում և ամեն ուր միշտ, մաքուր, բայց միշտ խոնավ ժայռերի կուրծքը. ապա ժայռերից պոկած կտորները խմբում հավաքում և մի հարմար տեղ, ճարպիկորեն վոստնում համբուրում և նրանց ու կրկին համբուլքով մնաս բարև ասում, անցնում—գնում:

Քուռը,—

Բանի՛-քանի՛ անգամ այս նույն տեղում դավաճանել և իր հունին և ափերից դուրս գալով՝ բավական մնասներ պատճառել Ավճալային.

Սակայն այս գիշեր խաղաղ ու հանգիստ հոսում և նա, խաղաղ ու հանգիստ և նաև Ավճալան:

*) Ծանոթ. Տեղի անունն և և գտնվում և Թիֆլիսից մոտ 10 վերստ հեռավորության վրա:

Լուսամուտներից ադոստ պլպլում են ճրագները և հազիվ նշմարելի դարձնում ծուխի մեջ կորած գյուղական խճիթները:

Իսկ գիշերը վորպես հին ու քրքրված դրոշակ՝ իջել-ծածկել և վողջ գյուղը:

Գիշերվա ժամը 12-ին, կայարանում հանկարծ լսվեց դանդախի զիլ զողանջ. արձագանգը յերկար ու յերկար տարածվեց ողի մեջ—կարծես վոսկե գնդակներ թափվում ելին պողպատե թիթեղի վրա:

Ապա վշշալով ու փնչացնելով դանդաղորեն, կարծես հանգստի կարոտը սրտին, հոգնած ու ծխի մեջ կորած՝ մոտենում և գնացքը: Մի վարկյան կանգ և առնում, հազիվ շունչ քաշում և հանկարծ նորից շարժում և թևերը, նորից փնչացնում ու վշշացնում, աշխատանքի անցնում, լեռների ուղին բռնում:

Շարժվում և գնացքը սկզբում դանդաղ, ապա արագ և իր վշշոցի մեջ խեղդում, խլացնում Գոի ալիքների դղրվոնը:

Լեռները նորից մնում են միայնակ իրենց տեղերում, իսկ լեռների մեջ՝ Ավճալան, սրտաբեկ Գուռ գետը, խավար գիշերն իր լուռ տարածված յերկնակամարով ու գուլնգզուլն սրտենդած ամպերով:

Սաղալն անցնում և վորոշ ժամանակ, հուլյսի նշուլներ են յերևում կամաց-կամաց գիշերն սկսում և գունատվել, արբեցածի նման գունատ առավոտը հազիվ բանում և իր աչքերը և իր պղտոր հայտքը ձգում կանաչադարձ լեռներին, ձորերին ու հովիտներին, ծաղկազարդ դաշտերին ու մարգերին:

Ոճուղին, վորպես մաքուր վզկապ, հանգիստ փոխում և քո առաջ և սպասում ճամբորդներին:

— Հի՛ ի՛ մո՛ո, սևուկս,— ուրախ ձայնում և սալապանը դիմելով իր չեղներին: Սալը ճռռալով շարժվում և դանդաղորեն, իր յետևից բարձրացնելով թանձր փոշի:

Նախիրը տարածվում եր արոտատեղերում կանաչ դաշտերի ու հովիտների վրա: Վոշխարների հոտը բարձրի նման մեկնվում ելին սարերի կանաչ լանջերին, իսկ խճուղու վրա մտրակի շարժվելուն պես՝ յերևում եր ձիու խրխնջոցը և սմբակների դոփյունը:

Լուսանում եր, խորը քնից արթնանում եր գյուղը, արթնանում եր հանգիստ ու խաղաղ համեստ ամաչկոտ, կարծես գիշերը գոյություն չուներ...

Այսպես եր գիշերն ու լուսաբացը Ավճալայում միշտ, բազմաթիվ տարիների ընթացքում:

Իսկ այսոր:

Գիշեր ե. պատռած դիմակով Ավճալայի մոտ՝ փոքրիկ յերկինքը երկկտրական ճրագներով լուսներով բարձրացել եր վեր ներգաշնակորեն սփռել իր փայլփլող լուսի ճառագայթները անտառների, ժայռերի Գուռ գետի և շուրջը ձգվող տարածության վրա:

Վշտալով մոտենում ե գնացքը, հոնդիպելով լուսավորված վայրերին՝ խնդում ե և աղմկելով նորից սլանում՝ տանելով իր հետ տեղեկութուններ Սև ծովին սպիտակ գիշերվա մասին:

Աղմկելով հասում ե Քուռը, նրան վրդովում են որեցոր քանդվող ու տաշվող ժայռոտ ափերը, ուժով դարձվում ե նրանց հսկայական ժայռերին ու քարերին, վորոնք նետվել են նրա սիրտը և խանգարում են նրա խաղաղ ընթացքը:

Քուի յերկու ափերը միացնող փայտե կամուրջները լուսավորված են երկկտրական լուսներով և գեղեցկութուն տալիս յերկաթ գծին:

Հեռվից յերևում են անհարթ կամարներով ժայռոտ ջրանցքները, վորոնց ափերին թափված են հողակույտեր:

Ափսեյի նման տարածված հարթության վրա բարձրացել են բաղմաթիվ, դեռևս չներկած, տներ և մեջքը դեպի գիշերն արած՝ կանգնած են հաղթ-եղեքորական ճրագներով լուսավորված:

Յերկար ձգված են յերկաթգծերը զուգահեռներով, վորոնց վրա անընդհատ վազվզում են վագոնատկաները:

Լծված ձիւսները քարշ են տալիս իրենց լեռնից ծանր բեռնավորված սալիկներ և անիմլների ճառագի հետ միասին բարձրացնում են իրենց գլուխները:

Իսկ հեռվում, մի ինչ վոր տեղ, լեռներում ու մթին ձորերի ալն կողմ, դեռևս գիշեր ե, անտեղ դեռ իշխում ե մութն ու լսվարը:

Այստեղ-այնտեղ խումբ-խումբ և առանձին-առանձին յերկվում են լուսավորներ դանադան հագուստներով, նրանցից յուրաքանչյուրը ձեռքի թիակով կամ յերկաթ-լոմով կովում ե հողի հետ, ձեռք չի քաշում նրանից այդ ջրով հղիացած սև հողից:

Բանվորների մի խումբ արդեն հոգնած ծանր աշխատանքից հենվել են ժայռերին ու յերկաթ-լոմերին և հոգնած դեմքերով նայում են նոր յեկած, բավական հանգստից հետո նոր ուժ առած բանվորներին:

Նրանցից միքանիսը ծխում են լրագրաթղթի մեջ փաթաթած ծանր սևացած ծխախոտը: Նրանք առանձին հաճուքով՝ ազահարար ներս են քաշում ծուխը մինչև թոքերը և ափսոսանքի հալացքով յետ թողնում բերանից մնացորդ ծուխը:

Կամաց-կամաց պարզվում են նրանց դեմքերը, և յերբ սուր ու հստակ արևի ճառագայթների տակ մեռնում և ելեկտրական լույսը, այն ժամանակ պարզ լերևում են կարծես ձեռքիդ դաստակի վրա, յուրաքանչյուր խորթ ու բորդ, կամուրջիկներ, բանվորի յուրաքանչյուր ուրազի շարժումը և ժայռերից պոկվող ամեն մի քարը:

— Լարենք ուժերս, ընկերսօվի աշխատանք, արդեն լուսանում ե, — Լավեց վոդեւորիչ և սրտաշնդիչ խոսքը, և մեկը մյուսի լետից գործիքները բարձրացրին իրենց գլուխները մայր-հողի քար-սրտից

— Կանգ առեք... դադարեցրեք, ընկերներ... այդ ժայռ յերկաթ-լոմերով չենք կարող քանդել, — բացականչեց նրանցից մեկը, վորը կանգնած եր հողաթմբի վրա և հուզված նայեց ցած, վորտեղ միքանի բանվորներ Քոփ ափին աշխատում եին յերկաթ-լարերով քանդել հսկա ժայռը՝ ջրանցք անցկացնելու համար:

— Կանգ առեք, անհրաժեշտ ե ոււմբով պայթեցնել այս ժայռը, կրկնեց նորից յերիտասարդը և ուշադրությամբ սկսեց ամեն կողմից դնել ժայռը:

Բանվորները դադարեցրին իրենց աշխատանքը:

Մեկ-մեկ դուրս եին գալիս բանվորները փոսից և Քոփ ափին մոտենալով՝ ծովում եին ւջ և նեղ ճանապարհով բարձրանում դեպի վեր: Ամեն մեկը նրանցից հանդիստ դեմք ունիւր շարժվում եր ծանր ու հանդիստ քայլերով և շունչ քաշում սրտի ամբողջ խորութեամբ: Բոլորը նայեցին նրանց առաջ կանգնած սևահեր ու սևաչալ, մարդուն վորը դեռես աչքը չեր հիտացնում ժայռոտ ափերից:

Խիստ լարված ուշադրության հետևանքով՝ նրա դեմքին նշմարվում եին ձգված նյարդերը շատ մեծ դժվարությամբ կարծես պոռչներն իրարից հեռացնելով՝ բացականչեց:

— Պատրաստվեցեք...

Յեւ նորից նրա դեմքն աշխատանքի պատրաստ՝ լուրջ ու խոհուն կերպարանք ստացավ:

Միքանի բանվորներ առաջ շարժվեցին, գործիքները վարդրին և ցած վազեցին:

Ժայռը պայթեցնելու հարմարեցրին պատրուզն անցկացրիղ
և կարճ ժամանակից հետո պատրուզի միջով արդեն ոձանման
գալարուեմներով պայթուցիկ ուռմբին հը մոտենում վառված
կայծր:

Մի վարկյան ևս հանկարծ լավեց պայթունի վորոտ: Սև
ու թանձր ծուխը բարձրացավ ողի մեջ և յերբ ծուխը պարզվեց
այն ժամանակ միայն յերևացին կտոր-կտոր չեղած քարաժայ-
ռերը և դուրս թափված հողը:

Թանձր ծուխը պատել հը ամբողջ շրջակայքը. մերթնդմերթ
պայթումից բարձր նետած քարերը թափվում էին ցած, իսկ
ջրանցքի քանդվածքում, կովի մեջ կորած վորսի նման ընկած
հը կողազերծ չեղած հսկա ժայռի մի մասը: Այլ նույն վայրկե-
սին խորքից դուրս ժայթքեց պղտոր ջուրը, հոսեց քարուքանդ
չեղած հող—քարերի վրայով ու միացած Գուռ գետի պղտոր ջրին՝
իր հետ քաշ տվեց քարեր, ավազ ու տիգմ:

Ժայռը քանդվեց. ժայթքած ջուրը դանդաղորեն հոսում հը
ու միանում գետին. ուղին ծածկվեց ցեխ ու տիգմով:

— Ապա ընկերներ, այժմ արդեն ժամանակ է ջրանցքի
հունը մաքրելու,—բարձր ձայնով կանչեց գլխավորը և աչք
ածեց բոլոր բանվորներին, վորոնք հանդարտ քայլերով անմի-
ջապես շարվեցին առաջ և իջան դեպի ջրանցքի հունը:

Նորից աշխատանքի անցան թիակները, ուրաղները և յեր-
կաթ-լոմերը: Գործի անցան սալները և փոքրիկ վագոնետկաները
դուրս թափած հողն ու քարը ջրանցքի մոտից հեռացնելու
համար:

Յեմ այսպես, հապարավոր հուժկու բաղուկների, հազարա-
վոր սրտերի և հարյուր հազարավոր մկանների շարժումները-
հարվածների տակ՝ մարեց գիշերը:

Իսկ յերկինքը մեծանում, լուսավորում հը շրջապատը: Բո-
ցավառված արևն իր վոսկեզոծ ճառագայթները սփռեց ամենու-
րեք և ցույց տվեց բոլորին իր ուժն ու կորովը:

— Սպասիր, կանգ առ, ո՛վ արև, Թիֆլիսն Ավճալայում իր
համար նոր արև է կառուցում:

Ձ Ա Վ Ա Ր Ո

Գնացքը կայարանի մոտ, կանգ առավ շատերը գնացքից
իջան:

Պարվեցին վագոնների մոտ, և մինչև շոգեշարժը նորից

գործի կանցներ՝ սուլիչն ու գործընդին բաց թողնելով, կայարանում
տիրեց անդուլ-խրարանցում: Ապա դադարեցին ձախերը. շարժ-
վեց գնացքը և սուլիչի ձայնը տարածվեց հեռու և հեռու, մինչև
ամբողջ գնացքի անհետացումը:

Ջավարը դանդաղ քայլերով համարեց վագոնների աստի-
ճանները: Նա հագած էր կաշվե պիջակ. նայում էր խիստ հայաց-
քով, դեմքին նկատելի էր լարված ջղայնություն:

Վերադառնում էր Թիֆլիսից: Ձեռքերը գրպաններին դրած
քայլում էր համաչափ, գլուխը կախ, կարծես վոչ վոքի չէր ու-
զում նկատել: Մտքերի յետերից ընկած՝ քայլում էր դանդաղ:

Նրա ուշադրությունը չեղին գրավում վոչ կայարանում տի-
րող ադուլիդ և վոչ ել հեռվում լսվող յերկաթուղու սուլիչի
ձայնը:

Մոտեցավ Գուգի ավին. անցավ գետի վրա ձգվող կամուրջը
և յերբ հասավ նրա միջ տեղը՝ կրթնեց կամրջի ճաղերին և սկսեց
նայել հեռուները:

Ապա մտադրադ խոր ու ծանր շունչ քաշեց:

Բարձրացրեց գլխարկը, վորի տակից արդեն պարզ նկա-
տելի չեղավ նրա փայլվող մազերը և արդ փայլվող մազերի մի
մասում ծնվելու որից տեղ գտած սպիտակ մազերի մի շերտ:

Նրա աչքերը յերկնքի նման խորն հլին և անհուն, արտա-
հայտում էին լրջություն, խորը թախիծ, ուժ ու կորույ:

Նորից իր հայացքը նետեց տարածվող հարթություններին,
ուր տեղ-տեղ յերևում էին սև բծեր:

— Մենք կկարողանանք, անպայման կկարողանանք,—բա-
ցականչեց ինքնիրան և շրթունքները նորից մոտեցրեց իրար:

Աչքերը հարեց մի կետի և ունքերի ժակ թաղվեցին աչ-
քերը:

Մտածմունքների միջ ընկավ, և կարծես՝ արտասանած խոս-
քերից հետո, խորաթափանց յեղավ իր սրտի մեջ. իր հոգու խոր-
քը, ուղեց ստուգել իր մտածմունքները և յերբ համոզվեց, վոր
նրանք գոյություն ունեն. սթափվեց ու նորից նայեց դեպի հե-
ռուները:

Ձեռքը տարավ ճակատին՝ արեկոծ մտքերը հանգստացնելու
համար:

Նրա սրտի զարկին ձայնակցում էր Գուգ գետի ալիքների
զարկն եր ավերին, վորի ձայները հազիվ էին հասնում նրա
գիտակցությանը:

Լսվեց գնացքի արագ դուրս գոցումը:

Արտամուրի արագությամբ լերկաթուղային անիվները գլորվում—պտտվում էլին և վոլոր—մոլոր պտտւթնեքով սլանում արագ ցած իջնող ուղիով: Դարիվերը, հարթ տարածութլունը և վայրենջք տարածութլունն անցավ հավասար արագությամբ: Դրան հետեւեց սուլիչի սիրտ կտրատող և անընդհատ կանչը:

Մի վայրկյանում, ինչպես ընկնող աստղի թողած փայլուն գիծ, Զավարի շվարած աչքերի առաջով անցան լերկաթուղու վագոնները:

— Ո՛ւ՛ո՛ւ... կտրվեց վագոնը վագոնին միացնող շղթան,— բացահանչեց դանդաղորեն:

Այս ամենն արտասանեց նա հատ—հատ բռներով, սարսափած, բռնեցքները սեղմեց, աչքերի բերբերը լայնացան:

Յեւ հանկարծ... խորտակվող գնացքի վագոնների ջարդվելու ձայներ, աղմուկ, իրարանցում. ցավ ու կոծի կլանչացներ, սիրտ մղկտացնող աղբրսանքներ...

Սթափվեց Զավարը, քայլերն արագացրեց: Վաղու՛մ էր Զավարը, վաղու՛մ էր տեսնելու զարհուրանքի տեսարանը...

«Ո՛ւ՛ր ես վաղում, մւր»,—մտածում եր ինքն իրան, —չէ՞ վոր այնտեղ պատահելու չես մահվան, մեռածներին, մեկ մեկու վրա դիզված դիակներին:

Կանգնիր, առաջ մի գնա:

Սակայն ծնկներն ուժեղանում էլին և նա արագացնում էր վաղը:

Հասավ դժբախտության վայրը:

Խոչ է տեսնում—վագոն վագոնի մեջ է անցել. ջարդված ու կտրված վագոններից դուրս է թափված հողը, քարերը, ցեմենտը և գետնի վրա կազմել է հսկա հողաթումբ, վորի միջից տեղ—տեղ յերևում են զարհուրանք ազդող մարդկալին զլուխներ ոգնութլուն աղեբսող ձեռքեր. իրանք չեն լերկում. թույլ ու հազիվ շարժում են ձեռքերը, կուչ ու ձիգ տնում մատները, և ալդ մատները կարծես կանչում են—«ոգնութլո՛ւն, ոգնեցե՛ք»...

Գլխավոր ջրանցքի կառուցման համար ցեմենտ ելին կրում: Վագոնները կտրվեցին արդելակից, վար սլացան վայրենջքից և այժմ զբաղված են փլասվածների և մեռածներին վորեւ ոգնութլուն հասցնելու գործով...

Հեռվից յերևաց ալիքանման շարժվող ամբոխը:

Հանկարծակի դատարկվեցին տախտակապատ սենյակները

և կայծակի արագությամբ դուրս թափվեցին մարդիկ. — դուրս են վազում մայրեր, կանայք, զավակներ — դուրս են վազում, վոր սեփական աչքերով տեսնեն մեռնելուց ազատված վորդուն, ամուսնուն, հորը:

Նրանց սրտերն ավելի շտապողականութուն են արտահայտում, քան աչքերը, վրաները. վազում են և վորոնում հարազատներին:

— Կենդանի, վողջ-առողջ ես, ազատվեցի՛ր... հանգստանում և արեկոծվող սրտերից մեկը:

— Դու չե՛լ, դու չե՛լ... խաղաղվում և ցերկրորդը, ցերրորդը և չորրորդը...

— Հայրիկ, ատերիդ վրայով արյուն և հոսում, ցավում և արգի՞ճ:

— Վնչ. սիրտս և միայն ցավում, նայիր, տես այն կնոջը ինչպես աղիտղորմ կանչում և ու լալիս, ամուսինը վազոնի տակն և մնացի:

Նայիր մյուս կողմ, տես, այնտեղ ել են լալիս... խղճահարվելով ասում և տղան և արցունքոտ աչքերով փաթաթվում հորը:

Հենց այդ ժամին, բոլորի համար անսպասելի հանրածանոթ Ջավարը դանդաղ քայլերով մոտեցավ սզավոր ամբոխին:

Դիմադժերի մեջ թաղված խորը կսկիծը տանջում եր նրա սիրտը:

Բոլորի հալացքները դեպի նա ուղղվեցին, բոլորն ել կարծես սպասում էին նրա մխիթարիչ խոսքին:

Մակաչն նա լուռ էր, վշտոտ:

Ներկա յեղողները աչք չեյին հեռացնում նրա դեմքից և լուռ նայում էին նրան: Նայող աչքերը կարծես զանգատվում էին նրան:

Բայց նա շարունակում եր մնալ լուռ ու անշարժ: Նրա աչքերի մեջ խորը, ծանր, սակաչն ինչվոր հուսի նշույլներ էին յերևում

Նրա աչքերը կարծես ասում էին...

— Ծանր ե, ծանր... չափազանց ծանր...

Լավեց հրաման.

Մաքրել յերկաթագիծը:

Ամենուրեք խաղաղութուն տիրեց. ամբոխը ցրվեց:

Ամեն ինչ կատարվում եր Ջավարի աչքերի առաջ:

Յեվ վորոշ ժամանակից հետո, Ջավարի աչքերի առաջ

սլացալ վաղոճներէ մի ալ շարք՝ փայտ-գերաններով և ցեմենտով բեռնավորված...

Անիմիւրի աղուկի ու սուլիչի հետ մեկտեղ՝ անհատացան նրա հալացքները հեռու անհատութեան մեջ:

Կանգնած եր անշարժ, նալում անհտացող յերկաթուղային գնացքի աղուկին և իր մաքում կրկին անգամ կրկնում:—

-- Մենք կկարողանանք... նորից սեւ կառնեն մեր մկանները...

ՓՈՔՐԻԿ ՄԱՏՆԵՐԸ ՅԵՎ ԱՄՈՒՍԻՆԸ

Հայրիկը գալիս է, հայրիկը... ուրախացած բացականչեց փոքրիկ Դիան և ղռան մեջ դիմավորեց ու ընկալ հոր գրկի:

Հայրը գրկեց յերեխային, բարձրացրեց և ջերմ համբուրեց նրան: Դիան իր փոքրիկ թաթերով պինդ փաթաթվել էր հոր վզովը, ապա ղգալով հոր փաղաքշանքը՝ ինքն էլ փոքրիկ թաթիկներով սկսեց շփել հոր բեղերը:

— Զավար, յեկե՛լ ես արդեն,— դիմեց կինն իր ամուսնուն և պատրաստվում էր ձեռք մեկնել ու բարեկէ նրան, բայց տեսնելով Զավարի տխուր դեմքը՝ չուղեց խանդարել նրա մտածմունքը:

— Տասներեք հոգի կորան, տասներեք մարդ — գառնութեամբ արտասանեց Զավարը և տխուր նայեց աթոռին:

— Վոչինչ բան է, Զավար, լո՛ւնջ ֆեսս դրանից. չե՞ վոր դրանց փոխարեն վիթխարի գործ է ստեղծագործվում: Ապա նայի՛ր նրանց, դիշեր ու ցերեկ նրանց մկանները շարունակ շարժման մեջ են, դիշեր ու ցերեկ աշխատում են, կառուցում. իսկ մարդիկ — ինչքան ուղես: Չե՞ վոր ինքդ ելիր ասում, վոր ամեն ոք ահագին թվով մարդիկ են գալիս՝ գործ վորոնելու, — հանդիսատու վճռական պատասխանեց կինը և բռնելով նրա ձեռքից՝ պատուհանից նայել տվեց դեպի կառուցողական աշխատանքները:

Յերկար ալդ դրութեամբ կանգնած ելին նրանք պատուհանի մօտ և մտախոհ նալում ելին դորշ տարածութեանը:

Միջանի վալրկյան հետո, յերկուսով նստած ելին մահճակալի վրա և ջերմանում ելին փոխադարձ սիրով ու գուրգուրանքով:

Ինչո՞ւ Դայի, դու ել մյուսների նման սենյակիցդ դուրս չեկամ. միթե սիրտդ չցավեցրեց պատահած դժբախտութունը — շեշտակի նայեց նրա աչքերին:

— Յեւ գիտեյի, վոր դու աչնտեղ չես, թիֆլիսուհի ես, ուստի և սիրտս հանգիստ եր, — պառասխանեց Դալին և իր դեմքը նորից պինդ սեղմեց նրա կորովի և ծանր բարախող սրտին։

Նրանց սերը ծովի նման անհատակ եր և անհատում։

Ջավարի տաք շրթունքները հպում էին նրա մախմուրի նման թրթռացող դեմքին և ջրոտ ձեռքերով համարում եր նրա քնքուշ ու բյուրեղանման մաքուր ու կանոնավոր մատները։

Լավեց հանկարծ սիրտ ցավեցնող չերեխալի լացի ձայն։

Լացողը Գիանն եր։

Նա լերկար նայում եր ծնողների սիրաբանությանը և զգալով, վոր ինքն անուշադրության և մատնված՝ վիրավորվեց, միաշնակ զգաց իրեն և աչքերը կարմրեցին։ Նա յեւ ծարավի յեր հոր ու մոր փաղաքշանքին, քաղցր խոսքին, համբուլքին ու ծնողական գուրգուրանքին։

— Յեկ, յեկ ինձ մոտ, սիրելիս, ինչ՞եւ չես լալիս, — մայրը գրկեց յերեխային և նստեցրեց ծնկներին։

— Յեւ ե՛լ եմ ուզում ձեզ մոտ լինել, — մեմուաց Գիան և սկսեց հեկեկալ։

Մեղմ ժպիտ անցավ Ջավարի դեմքով և իր կուլիտ ձեռքով սկսեց շոշիլ Գիայի գեղեցիկ սանդղված մազերը։

Սա նրանց միևնուճար զավակն եր։

Սա աչն հանգուլցն եր, վորը կապում-շաղկապում եր յեր-կուս կյանքեր, սիրող սրտեր իրար հետ։

— Դ՞հւ յեւ մեզ մոտ յեղիք, դ՞հւ յեւ, — ասաց Ջավարը և խլելով մոր ձեռքից յերեխային՝ նստեցրեց իր ծնկներին։

Նորից լռություն, նորից քաղցր կարոտի ու զգմանքի վայրկյաններ։

Պատուհանի մոտ արդեն իջնում եր մանիշակագուլն խավարը. ապտկիների մեջ զգում էլիր մի տեսակ կապաւումն մեղմություն-քնքշություն. իսկ հեռվում՝ կանաչ ստվերի տակ դեռ նշմարվում էին լեռները և մշուշապատ մոխրագուլն հորիզոնը, այստեղ-այնտեղ լուսավորված վոսկեկուլն ամպերով։

Նիզ ժամանակ ողի ալիքները բարձրացան և լավեց զանգի յերկարատե և ձայն, այս ձայնը կամաց-կամաց մոտենում եր, տաբածվում։ Ուժեղանում եր և ներզաշնակ դունդունոցով շինությունների, գլուղի, փողոցների վրայով անցնում գնում եր գեպի դաշտերն ու լեռները։

Ձանդակի ձայնի հետ մեկտեղ լսվում էին ուրախության ձայներ։

Մի քանի վայրկյան հետո, բնակիչները դուրս յեկան իրենց տներից։

Ամուսին, կին, մեծ ու փոքր, բոլորը շտապում էին դեպի այն կողմը, վոր կողմից լսվում էր զանգի ձայնը. ճանապարհին զբաղված էին կենդանի և ուրախ խոսք ու զրույցով։

Ձանգակի ձայնը հասավ նաև Ջավարի սենյակը, նրանց էլ ազդարարեց ընթրելու ժամանակը։ Հարբածների նման վերկացան, շորերը հագան և պատրաստվեցին դեպի ճաշարան գնալու։

Գիտն վաղուց էր առջից և աչքերը ճպճպացնելով նայում էր եկեղեցական ճրագներին, վորոնք սահմանափակ ճառագայթներով լուսավորում էին շուրջը։

— Բարե՛, Ջավար, սպասի՛ր, ի՞նչ ես շտապում, այ՛ մարդ,— լսվեց յետևից մի ծանոթ ձայն։ Ջավարը շուտ յեկավ ու տեսավ իր վաղեմի ու մտերիմ ընկեր Նոդարին։

Նախքան Նոդարը հարց ու փորձ անելը նրա գալու մասին կանխեց Ջավարը, ձեռքը մեկնեց և ասաց.— Ե՛կես յեկա հենց այն ժամանակ, յերբ այս դժբախտութիւնը պատահեց։

— Ինչո՞ւ ներկա եյի այդ դժբախտ պատահարին.— դու մի՞տեսեղ եյիր...— ավարտեց նա և նորից. հանգիստ արտահայտութիւն ստացավ նրա դիմքը։

— Գիշերս աշխատում եյի. մի քանի ժայռերի հիմքեր պաշտեցրինք. գլխավոր խանդակը (արիւը) վեց սաժենաչափ յերկարությամբ կտրեցինք և դրա հետևանքով ավազանի պատերի բարձրութիւնն էլ դգալի կերպով ավելացավ,— պատասխանեց Նոդարը և սև ու խորունկ աչքերով շեշտակի նայեց Ջավարին՝ նրանից վորեւ պատասխան ակնկալելով։ Սակայն յերբ նրա ասածները մտածմունքի մեջ ձգեցին Ջավարին, այն ժամանակ վիմեց Դալուն։—

— Բարի լույս։

— Բարե ձեզ... սովածացե՛լ եք,— քաղցրութեամբ հարցրեց Դալին։

— Վա՛յ յերբեք, սովածութիւնն ինձ չի նեղացնում. չիս միշտ սիրում եմ լինել ուրախ տրամադրված մարդկանց շրջանում, ուզում եմ միշտ նրանց հետ լինել։ Դճւք չեք կարով յեղեակայել, թե ի՞նչ ահագին բավականութիւն ե, յերբ տեսնում ես մարդկանց, վորոնք ամբողջ որը քրտնաջան աշխատել են, ստեղծագործել, ապա գալիս են բոլոր միասին ուրախ տրամադրութեամբ այն մտքով, վոր լավ ժամանակ անցկացնեն, կոր-

ցրած եներգիան վերականգնեն և հավասարապես բաշխեն իրենց ձեռքերի աշխատանքը:

— Այսօր, ինձ եր վիճակվել խոհանոցում աշխատելու աշուր, դժւք և բոլոր մուսներդ բախտ պիտի ունենաք վայելելու իմ պատրաստած կարտոֆիլի պյուրեն (կաշան): Չեք կարող չիլեակայել թե ինչքան ուրախությամբ և վոգեկորությամբ ելի աշխատում: Միասին ելինք աշխատում, 40 կին ու տղամարդ. բոլորիս մեջ աշխատանքը բաժանված եր հավասար չափով, ամեն մեկս վորոշ պարտականություններ ունեյինք. բոլորս ել լծված ելինք ընդհանուր աշխատանքի. այս աշխատանքի ժամանակ, վոչ վոքի դեմքին հոգնածություն կամ ձանձրույթ չեր նշմարվում— վոմանք մոմուտ, վոմանք լերգում, վոմանք հանաքներ ելին նուտ ընդհանուր ուրախություն եր:

Ջովարը լուռ եր ու մտախոհ, ուչք չեր դարձնում նրանց խոսակցութանը, խորասուզված եր մտքերի մեջ:

Վաղը նրա գրասենյակի առաջն են կոնդնելու 13 ալլիացած կանաչք, 13 մայրեր, 13 հալրերի զավակներ և արցունքոտ աչքերով ամեն մեկը նրանցից կնկարագրի իր դառն վիճակը և կխնդրի ողնություն...

Ինչ անի, ինչ կարող ե անել Ջովարն այդպիսի դեպքում... Նրա սիրտը քար հո չի, վոր չզգա նրանց գլխին չեկած դժբախտությունը, կարճի ե միթե սառնասրտությամբ և անտարբեր նայել թափվող արցունքներին: Սակայն ինչի՞մ ողնել, ինչի՞մ ամոքել նրանց անմխիթար վիճակը. ինչի՞մ հանգստացնել նրանց բեկված սիրտը, ինչի՞մ բավարարի նրանց, վճրպիսի հույսերով:

Այսպիսի մտքերի յետևից ընկած՝ նա չետ մնաց և չնկատեց, թե ինչպես Նոդարն ու Դալին արգեն բավական առաջ ելին անցիլ: Նրանք ուրախ-ուրախ զրույց անելով դնում ելին առաջ և մերթ ընդ մերթ հեռվից լսվում ելին նրանց ուրախ ծիծաղն ու բացականչությունները:

— Արդեն հասանք,—բացականչեց Նոդարը նայելով Դալու գեմքին:

— Սակայն ճւր մնացին Ջովարն ու Գիան,—հանկարծ բացականչեց Դալին: Նրա շրթունքների վրա դեռ, թարմ ելին ու չեյին անհետացել մի քանի վալրկաններ առաջ եր ամուսնու ջերմ համբոյութի հետքերը. նրա սրտում դեռ կարկաչում եր մի քանի վալրկան առաջ բոցավառ փաղաքշանքների աղբյուրը-անուշ սերը:

— Ինչո՞ւ չեք հարցնում Ջավարին, ինչներթի՞ք ե պետք-վերջապես ո՞վ ե Ջավարը,— լըջորին հարցրից Նոդարը և ուղղակի նայեց Դալու աչքերին։

— Ամուսինս ե... ո՞վ պետք ե լինի... միթե չգիտեք,— այնպիսի վրդովված ձայնով պատասխանեց Դալին, վոր կարծես թե նրա ձեռքից խլելիս լինեն իր սեփականութունը, իր ամուսնուն։

Ամուսին...— քմծծադ տալով պատասխանեց Նոդարը. դարձանալի չե, վոր այդպիսի կարծիք են հայտնում, ի՞նչ ե նշանակում ամուսինս, հավատացնում եմ, զգվում եմ չես այդ բառն արտասանելուց. մարդկային պատիվը վարկարեկող, սատրացնող բառ ե այդ «ամուսին» կոչված բառը։

— Ինչո՞ւ... ինչո՞ւ չես այդպես կարծում...

— Ինչո՞ւ, ահա, նայեցե՞ք ձեր շուրջը, նայեցե՞ք ուշադրությամբ սրանց բոլորին. միթե հնարավոր ե, վոր այսպիսի տեղում մեկն ու մեկն ասի, թե՛ ամուսին ունեմ։ Յես հասկանում եմ տանը, վորտեղ լինչ վոր անհայտ ուժով յերկուանձնավորութուն ապրում են միասին, այնտեղ կարող ես խոսք բանալ ամուսնուդ մասին, իսկ այստե՞ղ...— վերջացրից խոսքն Նոդարը և նորից մատնացույց արավ ճաշարանը։ Այս խոսքերը նա արտասանում եր բոլորովին հանգիստ, առանց վորևե վրդովմունքի և հուզմունքի, առանց վորևե ուժ գործ դնելու իր վրա։

Դալին մտածմունքների մեջ ընկավ. մի քիչ առաջ արտասանված խոսքերը տմբողջովին պաշարել ելին նրա ուղեղը «Ի՞նչ եր ասում, ի՞նչ եր...»,— մտմտաց ինքն իրեն Դալին, այն գիմադիծը, վոր ամեն որ տեսնում եր նա իր տանը, այն տեսարանները, վոր շարունակ պատահում եյին նրա ընտանեկան կյանքում, ավելի խորը և ավելի պատկերավոր ու շոշափելի կերպով դրոշմվեցին նրա սրտի վրա, նրա հույում։

Յերկար ու լայն դահլիճանման սենյակներում շարք-շարք դասավորված ելին սպիտակ սփռոցներով ծածկված սեղաններ, վորոնց վրա շարված եյին ամանեղեններ։ Տասնյակներով կին ու տղամարդ անցուդարձ եյին անում սեղանաշարքերի արանքներով և սեղանների շուրջը նստողներին մատակարարում եյին ուտելիքներ և խմիչքեղեն։ Ծառայողներն իրենցից ելին, աշխատում եյին հերթով-կամավոր և այդ աշխատանքի համար վարձատրութուն չեկին ստանում։

Ճաշարանի դուռը շարունակ բաց ու խուփ եր լինում— դա-

լիս ելին ու գալիս՝, կանաչք, յերեխաներ, տղամարդիկ և ալլն։ Գրավում ելին տեղերը, ղրուլց ելին անում իրար հետ, մատուցած կերակուրները բաժին-բաժին ելին անում իրար մեջ և իրար հյուրասիրում։ Մի քանի հարցուր մարդ նստած ելին սեղանների շուրջը. սեղանների վրա կար ամեն ինչ առատութեամբ։ Այսպէս ինձ իր ճաշողներով ներկայացնում եր մի մեծ գերդաստան, մի հսկա ընտանիք, վորի անդամները սերտորեն և անխզելի կապերով կապված ելին իրար հետ և վորոնց միացնում եր փոխադարձ սերը, թափած քրտնաջան աշխատանքն և ընդհանուր շահերը։

— Տեսնում ես. ալստեղ բոլորս ել հավասար ենք, մեր մեջ խտրութիւն չկա, — ասաց Նոդարը խորասուզված մտքերից սթափեցնելով Դաւուն... —

— Ընտանիք վոր, սա չեւ մի մեծ ընտանիք ե, մի հսկա գերդաստան, — բացականչեց Դաւին, միևնույն ժամանակ մտածելով այն մասին, վոր սա թեև ընտանիք ե, բայց ալստեղ բացակայում են ամուսնու փաղաքշանքը, ամուսնու ջերմ համբուլընեբը զավակի փոքրիկ մասները...

Ջավարը մոտեցավ նրանց։

— Սպասում եյիք ինձ, — դիմեց յերկուսին ել։

— Գեղ եյինք սպասում, իհարկե քեզ ելինք սպասում, — փալլատակող լալերով և ժպտալով պատասխանեց Դաւին. բայց ուղեղը զբաղված եր այլ մտածմունքներով. «Միշտ, միշտ հիշում եմ քեզ, շարունակ դու յիս նստած իմ հիշողութեան մեջ, քո պատկերն ե միշտ աչքերիս առաջ. սիրում եմ քեզ, նույնիսկ այն ժամանակ, իրը մենք նստած ենք մի ամբողջական մեծ ընտանիքի հետ ընդհանրական ճաշարանում. վորտեղ չեն ջոկում ամուսնուն, կնոջը, զավակին. ուր բոլորն ընկերներ — կյանքի և աշխատանքի ուղեկիցներն...

Ն Ա Ն Ո թ Դ Ե Մ Ք

Պայծառ ու գեղեցիկ որեր. սովորականի նման արեն իր վոսկեգուլն ճառագայթները սփռեց աջ ու ձախ՝ տան կտուրների վրա։ Բամբակագուլն սպիտակ ամպերը տեղ-տեղ կպել ելին յերկնակամարին և այնպես ելին յերևում, վոր կարծես առագաստանավեր լինելին ջինջ ու կապուտակ խաղաղ ծովի վրա։

Լույսի անդրանիկ ճառագայթների սենյակն ընկնելուն պես՝ Ջավարը վեր կացավ, հագնվեց և քայլերն ուղղեց դեպի իր առանձնասենյակը։

Սանդուխքի աստիճանները բարձրանալու ժամանակ, պատըշգամբում նրան հանդիպեցին մի քանի տասնյակ մարդիկ, նրանք բոլորն այս ու այն մոտիկ գյուղերի լեկած գլուղացիներ էին, վորոնք վերջին պատահարից հետո յեկել էին պաշտոն գտնելու:

Պատահած դժբախտության հետևանքով միտած 13 մարդու փոխարեն՝ պիտի ընդունվեյին 13 նոր աշխատակիցներ:

Ջավարը խիստ դայրույթ զգաց իր մեջ, յերբ նրանց նկատեց պատշգամբում. դեռ ցավերը չապաքինած, վերքերը չբուժած վիրակապերն էին սկսել բանալ:

Նրա սեղանի վրա դրված էր մեռածների անվանացուցակը: Ջավարն սկսեց կարդալ, ամեն մի ազգանուն կարդալիս՝ կանգ եր առնում, մտածմունքի մեջ ընկնում, որպիսի պարզ պատկերացնի. և վերհիշի կորած բանվորի գեմքն ու նրա ով լինելը:

Այսպես նա կարդաց իննը, տասը հոգու ազգանունները և իրբ տասնեմեկերորդին մոտեցավ՝ հանկարծ զարմացած կանգ առավ.—

— Միթե գանձապահն էլ և կորել, զոհ գնացել. նա թնչ գործ ուներ խառնվելու նրանց մեջ,—հարց տվեց ինքնիրեն Ջավարը և ավստոսանքով գլուխը շարժեց:

Հենց այդ ժամանակ ներս մտավ Նոդարը: Սովորական ուրախ գեմքով ու ժպտալով՝ դուռը բացեց բաց յերբ տեսավ Ջավարի մոռլված գեմքը՝ ինքն էլ մոռլվեց ու մոտեցավ նրա սեղանին:

Ջավարը առանց իր գլուխը բարձրացնելու՝ պատասխանեց նրա բարեին:

— Ի՞նչ կասես...

— Հիվանդանոցից եմ գալիս. վիրավորները շուտով կապաքինվեն:

— Նորից .

— Աշխատանքի վայրերում բանվոր ձեռքերի պակաս կա. լեղած բեռնակիրները չեն բավարարում պահանջված աշխատանքին, թնչպես անեմ, թնչ դիրք բռնեմ:

— Ուրիշ վոչթնչ:

— Վոչ...

— Պատշգամբում հավաքվածներից ընտրիր, վորոնց ցանկանում ես և տար գործի դիր:

— Ընտրելու դեպքում իհարկե լավ աշխատողներին կընտրեմ,— պատասխանեց Նոդարը և դուրս գնաց։

Մի քանի վայրկյան հետո, Նոդարը տասի չափ չերիտատասարդ տղաներին յետևից գցած՝ գնում եր աշխատավայրը։

Ջավարը Թիֆլիսից նոր գտնապահ պահանջեց. խնդիրն անմիջապես կատարվեց. յերկրորդ օրը հենց, նոր գտնապահը ներկայացավ Ջավարին իր համապատասխան փաստաթղթերով։

Ջավարը գլուխը կախ՝ նայեց ներկայացրած թղթերին և հարցրեց նորեկին.—

— Կուսակցական ե՞ք։

— Այո։

— Թիֆլիսը բոլորովին մաքներիցդ պիտի հանեք, ձեզ աշատեղ ընակարան կտրվի և կմնաք մեզ մոտ. յերբեմն ստիպված կլինեք, բացի պաշտոնական ժամերից, նաև արտաժամյա աշխատանքներ կատարել։ Այստեղ բոլորովին այլ կենցաղի ու կյանքի պայմաններ են։

— Համաձայն եմ։

— Հենց այսօր պիտի ստանձնեք դրամարկղը և անցնեք պաշտոնի, հետևեցեք ինձ։

Ջավարը վեր կացավ, առաջ ընկավ, նոր գտնապահը հետևեց նրան։

Սիրալիբ ընդունեց նրան գլխավոր հաշվապահը և գործի հետ մարնամասնորեն ծանոթացնելու համար, զրույց ունեցավ նրա հետ։

— Ձեր ազգանձնը,— վերջում հարցրեց Ջավարը և շեշտակի նայեց նրա դեմքին։ Այլևս չհեռացրեց նրանից իր հայացքը՝ թափարդի մեջ բռնված ձկան նման, աչքերը չեր հեռացնում նրանից։

— Իադոր,— պատասխանեց նա և աչքի տակով նայեց Ջավարին, վորը զվարկը վերցրեց և տակից յերևաց փալլող մազերի վրա սպիտակ շերտ։

— Իադոր,— զարմացած բացականչեց Ջավարը Իադոր... Իադոր...— կրկնեց նորից միքանի անգամ այդ անունը և խորը մտածմունքների մեջ ընկավ։

— Կարծես դուք իմ ծանոթներից պիտի լինեք լեթի հիշողությունս ինձ չի դավաճանում, մենք պիտի միտեղ տեսած լինենք իրար,— և իր ուշադիր հայացքը չհեռացնելով նրանից՝ մտածում եր և ուզում եր վերհիշել թե վժրտեղ և տեսել նրան։

Կադորի աչքերը խառնվում էլին. կանգնել եր շփոթված, դեմքը կարմրել եր. իր վողջ կյանքում յերկրորդ անգամ եր տեսնում փայլուն մաղերի վրա սպիտակ շերտ:

— Յես ել չեմ կարողանում հիշել, թե վճրտեղ ենք պատահել իրար, — հաղիվ լսելի ձայնով արտասանեց Խադորին և գլուխը կախեց, չկարողացավ դիմանալ Ջավարի շեշտակի հայացքին:

Ջավարն իր աչքը չէր հեռացնում նրանից կենտրոնացած իր մտքերում՝ աշխատում եր հիշել թե վճրտեղից ե հիշում նրան:

Անցյալն ամբողջովին վերականգնվել եր նրա մտքերի մեջ բաց և այնպես չէր կարողանում մտաբերել և պարզ պատկերացնել, թե վճրտեղ և թնչ պայմաններում և պատահել նա նորեկ գանձապահ են:

Դանդաղ ու հանդիստ, շուռ չկավ և կամաց քաշկերով հեռացավ նրանից:

Սենյակի դռներ մոտենալուն պես՝ կանգ առավ, գլուխն ավելի ցած կախեց, նորից իր հիշողության մեջ պատկերացրեց նրա դեմքը, բաց շատ շուտ ել ձեռքը թափ տվեց և դուրս գնաց սենյակից:

ԲԱՐՆԿԱՄՆԵՐ

Նոգարը հոգնած վերադառնում եր տուն. նա գոհ եր իր ալդորով աշխատանքից:

— Դալի, Դալի... մի բոպե նալիր այս կողմ. — բացականչեց նա, լերը մոտեցավ Ջավարի բնակարանին: Պատուհանում յերևաց Դալու գլուխը:

— Տես, աղադ ինչ յերկար կարթ ե շինել ձուկ վորսալու համար. դնում ե գետը, զգուշացրու, վոր կարթի հետ միասին շուրը չընկնի:

Մայրը նախ բարեկեց Նոգարին, ապա դիմելով Գիային՝ բացականչեց:

— Գետը չգնաս. Գիա, չգնաս:

Սակայն, հենց այդ պահին տղան դուրս պրծավ Նոգարի ձեռքերից, ծնկների տակով անցավ և արագ սլացավ դեպի Գուռ գետը:

— Ինչպես եք, ամբողջ որը չեք ձանձրանում անգործութլունից:

— Ինչո՞ւ յեք կարծում, վոր անգործ եմ, այսոր ընթերցարանում աշխատելու հերթն իմն եր. այնտեղից եմ այժմ վերադառնում:

— Կարելի՞ յե, այցի գալ ձեզ մոտ:

— Ինչո՞ւ չե՞ս, խնդրեմ, բաց Զավարը տանը չե՞ս:

— Զավարի հետ գործ չունեմ. ձեզ եմ աչցել՝ գալիս, նրան արդեն տեսել եմ այսօր:

— Համեցե՞ք, — ուրախ պատասխանեց Դալին և դուռն մեջ դիմավորեց նրան:

Սե, խոր ընկած կրքոտ աչքերն սկսեցին խաղալ Դալու վարդազույն դեմքի վրա:

Նրա սպիտակ կուրծքն սկսեց ինքն իրեն դողդողալ, տեսնելով չերիտասարդին իր տանը և մի տեսակ ջերմություն անցավ նրա մարմնով, յերբ ձեռք տվին իրար:

Հրավիրեց նստել:

Պոր ու բազմանշան հալացքով Նողարն ուշադիր նայում եր նրան:

Կարճ ժամանակում արդեն Նողարը բոլորովին տիրել եր Դալու սրտին ու զգացումներին, չերբեմն նա հուզմունքից վառվող աչքերը ձգում եր Դալու աչքերին, և այդպես չերկար մնում եյին լուռ, վորպեսզի նրա կրծքի արագ բարախումքն ել ավելի լսելի դարձներ իր համար:

Դալին զարմացած նայում եր նրան:

Մշուշը պատել եր նրա մտքին, թվում եր նրան, թե քնած ե ինքը: Դեմ առ դեմ, իր սենյակում նստած եր մի ոտար չերիտասարդ և համարյա թե վորեւե խոսակցութջան նյութ չունեյին իրար հետ:

— Յես շատ եմ ցանկանում ձեզ հետ խոսել: Դուք այնչափ դրավում ու կախարդում եք ինձ, վոր յես սառնասիրտ չեմ կարողանում նայել ձեր աչք ներքին ցանկությանը:

Դալին սկսեց դողդողալ:

Նա իր սրտում վախ զգաց. նրա աչքերի առաջ վտտքից մինչև գլուխ պատկերացավ իր Թանգագին ամուսինը՝ սիրելի Զավարը:

— Զարմանում եմ, թե ինչո՞ւ յեք դուք այդպես շփոթված ինչո՞ւ չեք հանդես բերում վճռականություն և կամքի ուժ...

— Ինչո՞ւ չեք այդպես կարծում,

— Տեսնում եմ, յուրաքանչյուր քաջափոխին յես այդ զգում եմ:

Լուռություն ընկավ:

— Յեթե յես ձեզ մեջ չնկատելի մի շատ դուրեկան, լուրհատուկ գիծ, վորը բոլորովին տարբերվում ե մյուս սովորա-

կան բոլոր կանանցից, անշուշտ յերբեք չեկի մոտենա և բարեկամանա նա ձեզ հետ,—նորից լուսթյունն ընդհատեց նոգարը, և նկատելով վոր Դավին վոչինչ չի ուզում պատասխանել՝ շարունակեց։—Այդպես ել պետք է լիներ Ահա, դուք ամեն որ ճաշարանում տեսնում եք հակալական, մեծ ընտանիքը, ուր բոլորն աշխատավորներ են և ոգավում են հավասար իրավունքներով։ Այսպիսի հասարակության, մեծ ընտանիքի մեջ ստեղծվում է ընկերական, մտերմական կապ մարդկանց միջև։ Մարդիկ ապրում են իրար համար. իսկ դուք, վոչ թե միայն ձեր ամուսնունն եք, այլ մեզ բոլորիս. նա իրավունք չունի ձեզ իր սեփականությունը համարելու և խլելու ձեզ այն հասարակությունից, վորի անդամն եք՝ մյուսներին հետ հավասար։

— Ճշմարիտ է, ճիշտ եք ասում դուք,—հաղիվ լսելի ձայնով շնջաց Դավին, — Զավարը յերբեք չի լի աշխատում խլել ինձ այդ հասարակությունից, այդ մեծ ընտանիքից,—ավելացրեց նա ցածր ձայնով. նրա այդ խոսքերի մեջ զգացվում էր ինքնասիրության վերավորանք։

— Ձեր մեջ, ինչ վոր ձգողական ուժ ինձ քաշում է դեպի ձեզ, յես չեմ կարողանում դեռևս պարզ վորոշել, թե վճրալիսի զգացումներ մոտեցնում են ինձ ձեզ, բայց չուրաքանչյուր բոպե զգում եմ, վոր յերբ ձեզ մոտ եմ լինում ու ձեզ հետ խոսում, ինչվոր հարազատություն, մտերմություն եմ զգում մեր չերկուսի սրտերի միջև։ Ո՛ր, վճրքան ուրախ ու չերջանիկ կլինեմ, յերբ ինձ թույլ տայիք ձեզ հետ բարեկամ, մտերիմը լինելու թույլ տվեք յես և դուք լինենք բարեկամներ, մտերիմ ընկերներ...

— Բարեկամ, ընկեր,—կասկածանքով արտասանեց Դավին,— չգիտեմ արժե՞, վոր այդ բանը լինի... կամ ի՞նչ հարկ կա. չե՞ վոր առանց այն ել մենք բարեկամներ ենք։

— Այո, բարեկամներ ենք, չեղեք այսուհետ ել իմ բարեկամը, իմ մտերիմը. դեռ մինչև այժմ չեմ հանդիպել մի կնոջ, վոր լիներ իմ յերազած, իմ տենչացած կինը։ Դուք առաջինն եք։

— Շատ լավ, համաձայն եմ,—հաղիվ արտասանեց շշուկով և յերբ բռնեց նոգարի մեկնած ձեռքը անսովոր կերպով սկսեց այլովիլ նրա դեմքը։

Վաչրկենապես վերկացավ, մոտեցավ պատուհանին և սկսեց նայել հեռուները ծավալվող մշուշապատ հորիզոնին, կարծես ներքին հուզմունքը մոռացության տալու համար։

Մտքերը շաղկւում էին։

Նրա արտեանունքների առաջ բացվում էր նոր յերկնակամար, հսկայական յերկնակամար, վորը լերբեմն յերևում էր նրան վարդազուն, յերբեմն կապույտ, յերբեմն սպիտակ, ճերմակ՝ վորպես ձուռն յերբեմն էլ կապարի նման ծանր և ցած իջած:

Չնկատեց, թե ինչպես Ջավարն արդեն մտել էր սենյակը:

Նա լուռ նստեց աթոռի վրա, նայեց Դալուն՝ ապա Նոգարին, վորոնք նույնպես լռեցին: Կանգնեալ նայեց իր սրտին— խորասուզվեց իր մտքերի մեջ, վորպիսկի վորոշեր, թե վորեւ կտակած, վորեւ բառ առած է իրան իր սիրտը:

Դալին այրվում էր ներքին հուզմունքից, նրա ալ—կարմիր դեմքն էլ ավելի սկսեց կարմրատակել արեւմտվում էր նրա սիրտը, յերբ կամաց-կամաց մոտեցավ Ջավարին և սիրալիբ հաղցեց.—

— Ինչո՞ւ չես տխուր, Ջավար, ինչո՞ւ,— իսկ իր մտքում լուռ կրկնում էր,— «բարեկամացանք իրար հետ, ուրիշ վոչինչ»:

Ջավարն այդ չեր լսում:

Նա չեր գգում այդ, միայն այդ ժամին նա ավելի խորը կերպով գգաց Դալու սիրը, ավելի պարզ նկատեց նրա դեղեցկու-
թյունը:

Որը կամաց-կամաց կարճանում էր, արեւ հետզհետե հեռա-
նում էր հորիզոնից իր հետ տանելով ճառագայթների անձրև:

Կամաց-կամաց լավարն իջնում էր պատուհաններին, պատերին, առաստաղին—մարդկանց դեմքերին:

Դիշերն իր իրավունքներն էր վերականգնում:

Խաղաղ ողի մեջ հանկարծ լսեց զանգակի ձայն, ընթրի-
քի ազդանշանն էր այդ, բոլորն էլ նորից շտապեցին դեպի ընդ-
հանուր ճաշարանը, դեպի մեծ ընկերական ընտանիքը, վորտեղ
բոլորը պատկանում էին իրար:

ՇԱՅԱԹ ՈՐ ԵՐ

Մայիսյան դեղեցիկ ու խաղաղ որերից մեկն էր, յերեկո-
յանում էր:

Զով քամին սահեց ու համբուրեց բլրակները փար-
թամորեն բացված ծաղիկները, կանաչած խոտերը ու թփերը և
անուշահոտ բուրմունք սփռեց ամենուրեք:

Ուրախության ձայնի բարձրացան ամեն տեղ և դեղեցիկ
ու արևոտ կիրակի որվան դիմավորելու համար սկսեցին պատ-
րաստություններ տեսնել:

Բանվորների մի մասը, վորոնք աշխատել էին առավոտ-

վանից մինչև իրիկուն, այսօր պետք ե աշխատավարձ ստանալին։
— Վո՞րքան ոռճիկ հաստով քեզ, Սանդրո, — հարցնում եմ եկել մյուսին։

— Քսանի հինգ ուրլի։

— Լավ ե ընկել, ախպեր, — ասում ե չերկրորդը և առաջ անցնում, վոր ինքն ել ստանա իրեն հասանելիքը։

Միքանի ժամանակից հետո բոլորն ել բավարարված իջնում եյին սանդուղքի աստիճաններով. ամեն մեկը ձեռքին հաշվելով իր թղթի և արծաթե դրամները։

Նոր գանձապահը բավական հմուտ եր դործին. արագութեամբ ու վարպետորեն բաժանում եր ոռճիկները, ընդամենը չերկու յերեք ժամվա ընթացքում, միքանի հարյուր մարդու հաշիվները մաքրեց, հասանելիքները վճարեց և չեր աշխատանքն ավարտեց, կանգնեց վտռքի, ձեռքը քսեց իր քրտնած ճակատին և միքանի անգամ խորը շունչ քաշեց։

— Ծանր ե աշխատանքը. — սենյակ մտնելով հորցրեց Ջավարը հայացքը բավական չերկար կենտրոնացնելով նրա վրա։

— Իհարկե, ծանր ե, — պատասխանեց նա՝ գետնին խոնարհեցնելով իր պղտոր աչքերը,

ինչվոր անսովոր շփոթութուն եր նկատվում նրա դեմքի վրա։ Մի անհայտ, վաղուց մոռացված դժգոհունք խառնում եր նրա սրտի հեռավոր ու խորունկ անկյուններից մեկում։

— Չե՞ք հիշում ինձ, — հարցրեց սուրից Ջավարը։

— Վհ, չեմ կարողանում հիշել...

— Այո, լեւ ել չեմ, մտաբերում, — խուլ ձայնով պատասխանեց նա մի փոքր ժամանակ կանգ առավ, ապա հանկարծ շուռ չեկավ և արագ քայլով հեռացավ այդտեղից, իր հետ տանելով յերբեմնի ծանոթ դեմքը։

Իսկ ներքևում խմբված բանվորները զրույցներով կամաց կամաց թողնում եյին բակը և հեռանում, գնում եյին դեպի տուն։

Նրանց մի մասը դեպի տուն շտապեց՝ ազատ ժամին իր ընտանիքում — իր կնոջ ու չերեխաների մոտ անցկացնելու համար իսկ մյուս մասն ել ճանապարհվեց դեպի Մցխեթ, վորտեղ սպասում եյին նրանց գինու նկուղներն ու գինով լիքը ամանները։

Շատերը նրանցից թռնում եյին չերկաթգծի վրայով անցնող գնացքի վագոնների վրա և միքանի վայրկյանում հասնում Ավճալա, վորտեղից բավական մոտ եր Մցխեթը։

Ճանապարհին այստեղ-այնտեղ յերևում եյին դար ու փոսեր

քանդվածքներ, ամենուրեք քանդում, փորում, կառուցում ելին:

Բանվորների լերկրորդ հերթին փոխարինողները սովորական աշխուժով և իրենց չհաւանդով շուռ ու մուռ ելին գալիս Բոթ ամիսին և խլում նրանից այս ու այն կողմ հոսող ճուղները:

Յերբ մուկն ընկավ այս քանդ ու փոսերում այլևս վոչ մի անցորդ չեր լերկում, բացի աշխատող բանվորներից:

Բոլորն ել գնում էին հանգստի, ուրախութեան ու զվարճութեան լեռերից—վոմանք իրենց տանը՝ սեփական սջախում, վոմանք գինեւաներում:

Վաստակած դրամներն անհաշիվ վատնում ելին նրանք գինեւորութեան մեջ և ինքնաբաւականութեամբ ուռճացած՝ աչքերը չաած՝ նայում էին սեղանի վրա շարժվող նորանոր գինով լիքը շշերին և շտապում էին դատարկել, վորպէսզի ել ավելի ուրախանան, ել ավելի մոռացութեան տան իրենց:

Այստեղ մնում ելին նրանք մինչև ուշ գիշեր: Կես գիշերին արդեն, ուժն ու գիտակցութեւնը կորցրած, հարբած, հոգիվ քայլերը փոխելով՝ վերադառնում ելին տուն, վոր լերկրորդ որը տորից պինդ սեղմին իրենց բաղնակներում լերկաթի նեղերը, քլուզներն ու բահերը:

Գիտակցութեւնը կորցրած ու շարված աչքերով հաղիվ վոտները քաշ տալով՝ հեռանում են Մցխեթի մասթ և ծուռ ու մուռ փողոցներից և վերադառնում, Վերին-Սվճալա՝ հողնած ու անքուն հազիվ բանալով աչքերը:

Ամբողջ գիշերվա ընթացքում մեկ-մեկ և խումբ-խումբ թեթևի ձգած՝ անհաստատ քայլերով գալիս են ու գալիս: Նրանցից վոմանք հայհուում--դուգոգում են, իրենց սովորական քաղցր ու համով հայհուանքներով, շարտում ոգի մեջ անթույլատրելի բառեր, կռվում--դուռում՝ առանց հասկանալութի ինչ՞ն և թե՞մ դեմ:

Վոմանք ել, հանգիստ, հանգիսավոր քայլերով, քեֆի արամաբլութեան տակ՝ ինքնագոհ գալիս են դանդաղ յերգիլով ու կատակներ անելով, վոչվոքի չեն անհանգստացնում: սակայն իրենց խաղաղ ձայնով յերգելով՝ բաւականութեւն են ստանում միայն իրենց:

Վորպէս խեղդված մարդու վողր՝ միալար կանչում են անգիր արած առդերը:

Քաղաքից հեռու մի-սե-հայր քաղում
ծըն-վե-ցի լիս, խրդ-նուկ խրդ-նի-քում

յիվ դար-դոս սրբ-սով, քան յիվ վեց քա-րե-կան
յես բան-վոր յե-դա ա-գուր-խա-նա-յում*):

Տուն հասնելուն պես՝ նրանց աղմուկից ու հալհոյանքներից արթնանում է յին կինն ու յերեխաները, իրենց զինովցած ամուսնուն, հարբած հորը զիմաւորում, քթների տակ մըթմըթաւով բանում են դուռը և անբավականութիամբ նալում նրանց կարմրած դեմքին:

— Խժոնցի՛ր բոլորը... Խժոնցի՛ր բոլոր փողերդ, հանգստացա՛ր,— զայրացած հարցնում և կինն իր ամուսնուն և քրքրում նրա զրպանները իսկ նա ձեռքերը բացած՝ շարունակում և իր յերգը.—

Ախ-ճառ-եմ սի-րում մեր ա-գուր-խա-նան
իւր ժիւ աղ-մու-կով, նա-րայ նր-րո-ցով յիվ
առ խա-նան-եով...

— Չոռ ու ցավը քեզ ու քո ազուրխանին, — անիծում և կինն ամուսնուն և աշխատում և վորհե կերպ հանգստացնել ու քնացնել նրան, վորպեսզի ալլեա չլսի ամուսնու հալհոյանքն ու աղմուկը:

Դիշերն իւր հերթին վերջին հոգևարքն և ապրում:

Պատահանից հեռվում յերևում և վարդազույնին ամուլ կապուտակ յերկնակամարը, վորտեղ լեռներն ու հորիզոնը փարվում են իրար, վորտեղ ծնվում— մեծանում և արեւ կապուլտ, փափուկ անկողնում և սպիտակ թավշանման բարձիւրի վրա, վորպես նորածին մանուկ:

Մ Ա Յ Ր Ը

Որը լուսացաւ. այսօր կիրակի յե:

Յերկնակամարում դարձյալ արեւ և

Նորից մալիսյան ջերմ ու դուրեկտն զով հոգի անցաւ տերեւների միջով, լավում և տերեւների խշխշոցը: Յերևում են կրկին սպիտակ ամպերը ու կանաչապատ լեռները, ձաղկավետ դաշտերն ու հովիտները:

Նոգարն այս խնամ շուտ դարթնեց:

Առավոտյան թարմ ու կենսաբեր ողը նրան քաշում և դիպի լեռները:

Կարծես հոգնել և քնից և այժմ ուղում և հանգստանալ հեռու, շատ հեռու՝ լեռների կանաչ լանջերում:

*) Աղյուսի գործարան.

Դուրս յեկավ բակը:

Նայում և հեռուն... գեղեցիկ տեսարան... փարթամորեն զուլած լերերում են գումարուխտավուն լեռնաշղթաներն իրենց սուր-սուր գագաթներով, հեռվում կարծես յերկնակամարը ձուլվում և քաղմբաբանդ լեռներն ու բլուրներն հետ. փչում և կենդանաբար արշալույսի առողջ ու կենսաբեր ոգը:

Շուրջդ ցվրված ճառագայթների ջերմությունն ու դուրեկանությունը սրախդ մեջ կարծես առաջացնում են ծարավի ջր-վեժներ, վորոնք դեպ իրենց են քաշում մարդկանց, և այդ ժա-մերին մարդս ուզում և, վորքան կարելի չե խորը, սրախ խոր-քերում անջնջելի տպավորել տեսած այս սքանչելի գեղեցկու-թյունները, վորպեսզի աչքերը, սիրտը ու բովանդակ զգացումները լցվեն— լիառատ հագնանա ուրախության ու բերկրության այս հազվագույտ տեսարաններով ու վայելքներով:

Բնության այս խորհրդավոր կանչը գերել եր Նոգարին, նա չկարողացավ ազատագրվել ու չլսիլ այդ անխոս կանչը:

Վազեց դեպի Ջավառի բնակարանը:

Այնտեղ ուզում եր գտնել իր բարեկամին, իր սրտակցին, վորպեսզի նրա հետ բաժաներ իր այս սքանչելի ապրումներն ու հուզումները:

— Դալի... Դալի... դուրս յեկ, նայիր այս կողմ:

Պատուհանի մոտ յերևաց Դալու գլուխը:

Ներքևից նշմարվեց նրա փափուկ կուրծքը խնամքով հո-վանավորող շապկի սպիտակ հաշիան. ձախ ձեռքով ծածկեց կուրծքը, իսկ մյուս ձեռքով ուղղեց իր թափված ծամիրը: Նրա յերեսը դեռ անվա յիւ և նոր եր վեր կացել անկողնից:

— Բարձրացե՛ք, — ամոթխածությամբ կարծես արտասանեց նա և գլուխը թագցրեց ապակիների յատեր:

Նոգարն արագ բարձրացավ սանդուղքի աստիճանները:

Ջավառն ինքն իրեն ասաց. — «Նորից Նոգարը» և թեթև ժպտաց:

— Գնանք, Ջավառ, չե՞ս ուզում անցնենք դեպի կանաչ բլրակները, մթթե չես ձանձրացել տնից...

— Ի՞նչ անդարդ մարդ ես, Նոգար ուզում ես ժամանակդ սպանել... Խիս չիս գործ ունիմ, պետք և պարզեմ հաշիվներ ա-նեմ, թե չե՞ր հնարավորություն կունենանք մեր աշխատանքն ավարտելու:

— Ի՞նչ դրա ժամանակն է, գործ չունե՞ս հետաձգելու: Այն-

քանն ել բավական ե, վոր աշնչափ լեռանդով տարվում են աշխատանքները:

— Այդ բավական չե, Նոգար, անհրաժեշտ ե ճիշտ նպատակին մոտենալ ե իր ժամանակին կառուցել ու ավարտել կայարանի շինութիւնը:

— Ախ, Զավար, յերբ դու իմանայիր, թե ինչպե՞ս չեմ ուղում, վոր շուտ ավարտվի այդ աշխատանքը: Յես այստեղի կենցաղը շատ եմ հավանել շրջապատն ու միջավայրը շատ են դուր գալիս ինձ: Ապրում եմ այստեղ ե թվում ե ինձ, վոր արդեն կաղմակերպել ենք մի տեսակ կոմմունա: Թվում ե նուէնպէս, վոր ամեն տեղ ել այսպէս են ապրում, ինչպէս մենք: Դու տեսնում ես անշուշտ, վոր բոլորն ել աշխատում են, ամեն ինչ շնորհանուր ե: Շատ սիրեցի այս կյանքը ե չեմ ուզենա, վոր շուտ զրկվիլի այսպիսի ջերմ միջավայրից: Յերբ մի րոպե մտածում եմ ու պատկերացնում, վոր մեզնից այն կողմ ամեն ինչ փնացել ե անփութիս, վոր այստեղ մարդիկ ե ընտանիքները խորշում են իրարից ե ապրում են ջոկ-ջոկ, առանձնացած կղղիացած կյանքով՝ բարեկամութիւնից խեղդվում, եմ զայրուլթս գալիս ե:

Յես ատում եմ Թիֆլիսը ե բոլոր քաղաքները, վորովհետեւ այնտեղ առաջվա նման շարունակվում ե սովորական առևտուրը, առևտուր նուէնիսկ մարդկային խղճի... վնչ, Զավար, յես չեմ ուզում, վոր շուտ ավարտվեն աշխատանքները, այլ ընդհակառակը՝ շարունակ ուզում եմ. վոր յերկարեն մեր աշխատանքները ե վորքան կարելի լե ու շուտ ավարտվի կայարանի կառուցումը:

— Ասածդ ինքնախաբեկութիւն ե: Այստեղ կոմմունա չկա, վորովհետեւ ինքներս ել աշխատանքը դնում ենք դրամով:

— Կավարանք ելեկտրո-կայանը ե նորից կվերադառնանք առևարականներով ե գործադուրկներով լեցուն քաղաքը ե իհարկե կանջատվենք այս միջավայրից ու տեղական կենցաղից:

Նոգարը, Զավարի այս պատասխանից հետո կարծես մի տեսակ վիրավորված զգաց իրեն ե այդ պատճառով ճակատը կընճռեց, հոնքերը կիտեց ե պի՛նդ սեղմեց ատամներն իրար:

Լուութիւնն ընկավ:

Վոչ վոք ձայն չեր հանում:

Զավարը շատ եր սիրում Նոգարին ե յեթե կուզեք, այս հսկայական մեծ ընտանիքում նրանից ավելի մոտիկ, մտերիմ մարդ չեր ճանաչում:

— Գնանք, լեղրալը, գնանք նպատակին հասնելը դեռ հե-

ուռ լեռն Այն ուղիները, վերոնք տանում եյին դեպի նպատակը, միևնույն եւ, արդեն փոխված են: Այլեւս կարիք չկա վոչ արշուճ թափելու եւ վոչ ել քրտինք: Բան չկա, յերեւի մի որ կհասնենք մեր ցանկացածին,—չեզրակացրեց նա ե թունավոր ժպտաց:

— Սխալվում ես, շատ ես սխալվում. ուղին չի փոխվել, նպատակն ել նույնն եւ Մենք միայն դադարեցրել ենք կռիվը, այլեւս անհրաժեշտ չէ: Քանդվածներն ու ավերվածները պիտի վերաշինենք, պիտի կռուուցենք, իսկ դու կարծում ես, վոր լեթե դադարացրել են պայքարը եւ միջոցները փոփոխել—դա նշանակում ե՝ փոխել ենք մեր ուղինը եւ հրաժարվել մեր նպատակից, ամենեկին վոչ:

— Յեթե այդպես եւ, ապա ինչո՞ւ չենք ոգտվում մեր նվաճումներից, մեր հաղթանակներից ու հաջողություններից: Ինչո՞ւ որինակ՝ չենք վոչնչացնում, հենց թեկուզ, մասնավոր առևտուրը:

Այդ ել շուտով կլինի Շտապել պետք չէ, անհրաժեշտ ե կաղդուրվել, վերականգնել մեր ուժերն, ամրապնդվել. պետք ե կանոնավոր հոռնի մեջ դնենք պատերազմի ե հեղափոխության տարիներում ընկած արդյունաբերութունը ե յերկրի տնտեսական վիճակը, արտադրողականութունը, այն ժամանակ դա լեւ կփոխվի, անպայման կփոխվի, մասնավոր առևտուրը կվերացնենք:

— Այժմ, հենց այժմ պիտի փոխվի, ինչո՞ւ հետաձգել, ինչո՞ւ դանդաղել: Հետաձգել... նշանակում ե խնդրել մոռացության տալ, կորստի մատնել:

Ջավարը լռեց. այլեւս վոչինչ չպատասխանեց, ճակատը կընճոռեց: Բարեկությունից ու ջղայնությունից խեղդվում եր, բայց զսպում եր իրեն ե վոչինչ չիր արտահայտում:

Նոգարը տեսնելով, վոր անպատասխան մնաց, հանկարծ փոխեց իր խոսակցության լուրջ տոնը ե քաղցրութամբ հարցրեց. —

— Այդ դեպքում թող Դալին դա ինձ հետ... նա իրավունք ունի առանց քեզ գալու:

Ջավարն ուսերը վեր քաշեց:

Նա իրոք չեր կարող իհարկե արգելել իր սիրածին զրոսանքի գնալուց, մասնավանդ այն դեպքում, յերբ ինքը չեր ուզում ե հրաժարվում եր ոգտվել այդ բավականութունից:

Դալին շալը ձգեց ուսերին, կարող եր գնալ իհարկե, բայց իր հայացքը չեր հեռացնում Ջավարից, շարունակ նայում եր նրան, կարծես ուզում եր հարցնել. —

— «Արդդք չես բարկանա, յեթե գնալու լինեմ», — սակայն չեր համարձակվում ասել, շարունակ կրկնում եր իր մտքում և հետն ավելացնում.

— «Դու հո լավ գիտես, Ջավար, թի վորքան եմ սիրում քեզ, բայց լինչ արած, գնում եմ»:

Նրանք դուրս չեկան. Նոգարն ու Դալին կողք-կողքի գնում եյին առաջ. ճանապարհին մերթ լսվում եր սուլոցի, մերթ չեր-գի ձայն և Դալին կամաց-կամաց մոռացության եր տալիս Ջավարի գոլությունը, վոր ինքն ունի ամուսին, վոր Ջավարն իր զավակի հայրն է...

Բարձրացան բլրակը:

Բացված եյին վայրի մասրենու ծաղիկներն ու մաքդադե-տինները, թփերը, վորոնք իրենց շուրջը տարածել էին դուրե-կան հոտ:

Բլրակը ծածկված եր թավշանման փափուկ ու հստակ թարմ կանաչներով:

Փչում եր լեռնային առողջ, դով քամին և խտտդացնում եր Դալու առողջ ու լիքը կուրծքը:

Նստեցին մի թփի տակ և չերկար ժամանակ նայում եյին առաջներում բացվող տարածությանը, վորտեղ յերևում եյին կամուրջներ, գետնի վրա մոխրագույն ժապավենի նման ձգվող Դուռ գետը, շինություններ և ճանճերի նման վխտացող մար-դիկ:

Ապա մաքերի մեջ խորասուզված՝ գլուխները կախ ձգեցին, և չերկար նստած եյին անխոս ու անշարժ: Յերբեմն-յերբեմն մի-այն լուռ պոկոտում եյին իրենց շուրջը բսած թփիկների տերե-ները և խոտերի թերթիկները:

Շարժվեց Նոգարի սիրտը, մի տեսակ անհանգիստ ու դու-րեկան դող անցավ նրա ամբողջ մարմնով:

Նրա լերակների մեջ արյունն սկսեց շարժվել անսովոր տ-րուգությամբ, աչքերը ջրակալեցին:

Սիրտն սկսեց ալեկոծվել՝ ներքին հուզումները փոթորկ-վեցին բարձրացան, վորպես հուժկու ալիքներ: Յեվ նրա ափան-ջին քնքշորեն սկսեց շշնջալ հետևյալ լերգը.—

«Յես յերգում եյի գույն-գույն ցեղեցեցում,
Պրքեցում ամուս ծաղկանց բուսմունքում,
Վորոցում եյի ու անվերջ փնտռում
Պոքոթ ողբից խոսերի միջոցում»...

Դալին սիրտը բոցավառ լսում եր:

Անդիտակցաբար ու անհաշիվ պոկոտում եր ծաղիկների
թերթիկներն ու թփերի տերևները:

Նոդարի հուզմունքը քանի դնում ավելի և ավելի սաստկա-
նում եր... ձայնը բարձրացրեց:

Ակամա մոտեցան իրար, ուս ուսի կպցրին, մի քանի վայր-
կյան ևս և ահա Դալու հուզմունքից կարմրած դեմքը սեղմվեց
Նոդարի բոցավառ կրծքին:

Դալու սիրտը զարկում եր ուժգին:

Նրա փարթամ կրծքի վրա քնքշորեն խաղում եր շապկի
սպիտակ հաշիան և դուրեկան ինքնամոռացությամբ լսում եր.—

«Յես յերգում եյի զույն-զույն ցնորհներով»...

Հանկարծ, այդ հուզիչ վարկյանին, բոլորովին անսպասելի՝
բլրակի դիմացի կողմից, չերևաց Գիպի գլուխը: Նա շատ ուրա-
խացավ, չերբ տեսավ մորը:

Արագ մոտ վազեց և ուրախ-ուրախ բացականչեց.—

— Մայրիկ... մայրիկ...

Մայրը սթափվեց. աչքերը շաղվում ելին, մշուշապատ նայ-
վածքով հաղիվ եր վորոշում իր վորդուն:

— Ի՞նչ ես շինում այստեղ...

— Ծաղիկներ եյի քաղում...

— Ծաղիկներ...

— Մայրիկ, սա հո հայրիկը չե...

— Գեռին ե.

— Իսկ քեռին միթե հայրիկ ե...

Գիան հիշեց հանկարծ իր . ծնողների՝ հոր ու մոր փաղաք-
շանքը, սիրալիր գուրգուրանքը մահճակալի վրա, իրենց տանը.
սակալն այն որը, միասին նստած՝ իրար գուրգուրում եյին իր
հայրն ու մայրը. իսկ այժմ, մայրը սիրաբանում և մի ոտար
մարդու, ինչ վոր քեռուն:

— Հետո՞, ի՞նչ ես ուզում.

— Վոչ մայրիկ, սա հո հայրիկս չե, սա քեռի՞ն ե, այո՞...

Դրանից ավելին լոչինչ չեր համարձակվում ասել փոքրիկ
Գիան. նայում եր մեկ սրան, մեկ նրան:

Դալին ավելի շփոթվեց:

Պատորվեց նրա սիրտը, միտքը:

Աչքերն Էլ ավելի շաղվեցին. այս անգամ շփոթ տրամա-
դրություն ունեցին:

Վեր թռավ տեղից:

Արադությամբ կապեց բացված կոճակները, ուղղեց թափ-
թըփված մադերը, Դեյրան և վորջան՝ ուժ ուներ արագ վաղքով
ուղղվեց դեպի տուն, դեպի ամուսինը:

Վոչինչ այլևս չեր լսում. այլևս վոչինչ չեր զգում:

Վազում եր և նրա ականջին հասնում էին միայն թմրեց-
նող տողերը—

«Պարոնում եյի ու ամպերը փնտում

Կորցրած ողերգ խոսերի միջում...»

ՀՈՒՇԵՐԻ ԳԻՇԵՐ

Աշխատանքի որն անցավ—զլորվեց անհունութան մեջ՝ իր
հետ տանելով սովորական ազմուկն ու ժխորը, իր խինդն ու
ցավը:

Կապարի նման ծանրացած գլխով պտուկած և Զավաբը խո-
րասուզված տխուր մտքերի մեջ, և այդ մտքերը քանի գնում ել
ավելի մեծանում, ել ավելի հսկա ելին դառնում—ծովափին մո-
տեցող նավի նման—և ամբողջ միտքն ու հոգին պաշարում են
ծովացած տխուր ու մռայլ մտածմունքները: Ինչ վոր մի անհայտ
բան տանջում-մաշում եր նրա սիրտը, կրճում նրա ուղեղն ու
հոգին. կարծես մեկը մտել եր նրա խաղաղ ու անդորր սրտի
խորքը, խանգարում—անհանգիստ եր անում:

Այժմ նա մենակ և իր մտքերի հետ: Վոչինչ չի զգում, մո-
ռացել եր իր շրջապատողներին, մոռացել և նաև իր թանգագին
կնոջը, վորը յերազում անդամ լսում և Գիւյի ձայնը և վեր հի-
շում խոտերի մեջ կորցրած ականջողը:

Կոշմարային գիշերը ճնշում և նրա սիրտը:

Քունը փախել և նրա աչքերից:

Նրա աչքի առաջ կանգնած և ծանոթ դեմքը.— սև խոր ըն-
կած աչքերով, փոքր ինչ ուռուցիկ քթով և սպիտակ, փղոսկրե
նման ճերմակ ատամներով:

Անցյալի հուշերը մշուշապատ դիմագծերով պատկերանում
են նրա աչքերի առաջ:

Անցյալի հուշերն ու պատկերները մեկը մյուսի լետելից
շարվում, փոփում են նրա բարձի վրա և եկրանի նման արագ
անցնում նրա աչքերի առջև:

Անցյալն ամբողջովին վերականգնվել և նրա առաջ:

Նա լերկորող անգամ կարծես ապրում և անցյալ կյանքը—

աննյակը յերեւում և բոլորովին փոխված—կորցրել և իր իսկական տեսքը:

Այս պատահեց վեց տարի առաջ:

Այն ժամանակ ավելի յերիտասարդ եր և ավելի թափ և ուժգնություն կար նրա մեջ:

Նրա բազուկների մեջ հեշտությամբ ճկոււմ եր Խորասանի թուրը և ամեն ազջիկ ընկճվում—խեղճանում եր, յերբ աչքը ձգում եր նրա բոցավառ աչքերին:

Դալու սիրտն ել այն ժամանակ և բեկվել Ջավարի անհուն ցանկութունների տարափի տակ, և նորից Ջավարն եր, վոր կենդանացրեց նրա բեկված սիրտը:

Սակայն պատերազմ...

Արյունահեղություն եր ամենուրեք, ուր վոր շահում-շահա-
չում ելին զենքերը. իսկ Ջավարը, վորպես ռազմիկ, զինքը ձե-
ռին պաշտպանում եր մեծ Ռուսաստանի սահմանները:

Անցան յերեք յերկար տարիներ:

Հոգնեց կռվող զորքը, զինվորները տհաճությամբ դիմավորում ելին մահվան և ամեն անգամ զգում ելին, վոր կատարում են մի ավելորդ աշխատանք, ապարդյուն հերոսական ջանքեր:

Սակայն մի որ, բոլոր ֆրոնտներում՝ թիկունքից հանկարծ կարմիր դրոշը ծածանվեց և մարդիկ իրար սկսեցին շնորհավորել վաղուց սպասած ազատության համար:

Փետրվարյան ձյունախառն որերին եր:

Սակայն պատերազմ դեռևս շարունակվում եր, արյունը հոսում եր աջ ու ձախ, ընկնում ելին անմեղ զոհեր:

Ջավարը շատ լավ հասկանում ևր, վոր թշնամու պարտու-
թյունը վոչինչ չեր տալու ազատություն սիրող աշխատավոր
մասսաներին և զարմանում ու թերահավատ եր վերաբերվում
Պետրոգրադից լեկող հրահանգներին.—

— «Պատերազմ մինչև վերջը, պատերազմ մինչև վերջնա-
կան հաղթանակը»:

Հարքը հոգնած, ուժասպառ, սուլի յեր մատնված:

Պատերազմը ձանձրացրեց նրանց, ցանկացան տեսնել ի-
րենց նորոգված ազատ յերկիրը, ազատ հայրենիքը:

— Թող կորչի պատերազմը...

— Թող կորչի արյունահեղությունը...

— Կեցցեն բալլեիկները,—լսվում եր ամեն կողմից և բո-
լոր ֆրոնտներում միլիոնավոր հոգնած զինվորներ թողնում ելին
զենքերը, վերջ տալիս կռվին:

— Չենք ուզում պատերազմ. ուզում ենք վերադառնալ տուն, ցանկանում ենք ապրել մեր ընտանիքում, մեր տաք ու ջախներում: Ուզում ենք հող, գործարան, աշխատանք, — կանչում եյին զինվորները և ճիշտ վոր, նրանք ուզում եյին գործարանում աշխատել, հողը մշակել, վորովհետև վաղուց կտրված ամեն ինչից, կարոտցել եյին աշխատանքին, ստեղծագործական շինարարությանը:

Շարժվեցին հարյուրավոր վերստեր լերկարությամբ ձգվող զորամասերը: Շարժվեցին, վորպես ովկիանոսի հսկա սառուցյներ, վորոնց ներքին շերտն արդեն սկսվել եր հալվիլ. շարժվում եյին ու գնում դեպի հալրենի անկյուններ, դեպի մայրը, կինը, լեռնախաները, դեպի ստեղծագործ. շինարարական աշխատանքը:

Նրանք ծարավի եյին խաղաղ կյանքի. նրանք ուզում եյին վորեւե կերպ տուն հասնել, իրենց սեփական ոջախը, այնտեղ ջերմանալու սեփական արևով, շնչելու իրենց ընտանեկան հարկի դուրեկան ողը:

Այս հսկա ալիքներին հետևեց նաև Զավարը, վորպես մի կաթիլ ջուր — ջերմ ուրախության, անուշ յերջանկության ու քաղցր լերազային ապրումների սպասելիքներով:

Սակայն ճանապարհին, այս շարժվող ալիքներին, արդենք եյին լինում խաղաղ տուն վերադառնալու՝ բոլոր նրանք, վորոնք դեռևս ցանկանում եյին շարունակել պատերազմը, վորոնք դեռևս չեյին հագեցած միլիոնավոր անմեղ զոհերի արյունով:

— Ե՛ս զզվելիները բոլորը հուսներ են, հազմաճակատը թողնում — փախչում են և մեղ ձգում վտանգի առաջ, դավաճանում են մեզ:

— Բռուներ են, Է՛ն ել բայլչեկներ: Զինաթափ արեք բոլորին և այնպե՛ս ճամբեք իրենց տունը. թող դատարկաձեռն անցնեն մեր յերկրի վրայով, — ասում եյին Կովկասյան ժողովուրդները. այսպես եյին դիմավորում նրանց Վրաստանում, Ալլերբեջանում:

Իզուր թափվում եր անմեղների արյունը. շատ տեղերում նույնիսկ հազմաճակատներից գնացքներով վերադարձող հոգնած զինվորների վազոնները — ամբողջ գնացքը կանգնեցնում, խուզարկում բոլորին. խլում եյին բոլորից զենքերը, հազմամթերքը. զինաթափ եյին անում հուսներին, հայերին, կոտորում եյին անխտիր բոլորին, վոչնչացնում ամեն ինչ:

Հաճախ զինվորներով լեցուն վազոնների վրա բաց եյին

անում ուժեղ կրակ և հենց վազոնները մեջ կոտորում տուն վերադարձող՝ ընտանիքի ջերմ կարոտով դեպի հայրենիք վերադարձող զինվորներին:

Այս դժբախտների մեջն էր նաև Ջավարը և շատ հաճախ ճանապարհին յենթարկվում էր սովի, ցրտի, դժվարութունների ու բազմազան դժբախտությունների:

Կայարաններից մեկի մոտ, մի որ դնացքը կանգնեցրին, լերկաթուղու մեքենայական մասից դուրս բերին ձեռք ու վոտքը կապած մեքենավարին: Վազոնները, վորոնց մեջ լեռն-լեցուն նստած էին զինվորներն իրենց զենքերով, շրջապատեցին զինված մարդկանցով ու դնացիներով և կրակ բանալու սպառնալիքի տակ դուռացին:—

— Զենքերը վնք դրեք... անձատուր չեղեք...

Զինվորները կարծեցին թե ավազակներ են, ուղեցին դիմադրել. մինչև իսկ վազոնների ներսում դիրքեր սարքեցին և պատրաստվեցին կովի, սակայն զրսիները կրակի քաշեցին բոլորին և փոքր ժամանակից հետո այլևս չեղին բարախում խաղաղ աշխատանքի այնքան ջերմ փափագով կարոտող կենսուրախ սրտերը:

Սա առաջին դեպքը չէր և վոչ վերջինը. քանի՜-քանի՜ եղև լոններ, քանի՜-քանի՜ ամեղ մարդկանց խմբեր զոհ էին գնում ամեն որ այս որինակ ամարդի վարմունքին. Շամքորը դժողք էր դարձել տուն վերադարձող զինվորների համար—թալանվում էին ու կոտորվում:

Այս անգամ էլ զինաթափ չեղան. անձնատուր չեղան: Գրեցքը պաշարող մարդիկ ներս են թափվում վազոնները՝ դուրս բերում հալ զինվորներին՝ կոտորելու համար, իսկ ուսաներին՝ խուզարկելու և թալանելու:

— Ты русский,—դիմեց մեկը Ջավարին:

— Грузин...

— Вреш, не похож!.. Клади винтовку!.. Ղալրացած գոռաց փափախ մինչև ունքերը քաշած ձիավորը, կատաղի աչքերը վոլորելով դիմացի կանգնողի վրա. նրա ուռուցիկ քիթը դեմքին տալիս էր խիստ ու դժան արտահայտություն: Հաստ շրթունքների տակ լերևում էին փղոսկրանման սպիտակ առասները՝ խիտ-խիտ կողք-կողքի շարված:

— Нет не брошу 4 года воевал с этой винтовкой.

— Нууу, твою мать... գոռաց ձիավորը, հրացանը շարժեց

ողի մեջ և կոթով ուժեղ զարկեց կրծքին: Վազոնի բաց դռնից ցած ընկավ Ջավարը և ուշաթափ փովեց գետնին:

Նա այլևս վոչինչ չեր տեսնում. աչքերին միայն մերթ ընդ մերթ յերևում էին՝ ուռուցիկ քիթը, սև աչքերը և սպիտակ ատամնաշարքը:

Մշուս կողմում լսվում էր բարձր աղմուկ: Հաճախ լսվում էին ձայներ...

— Бей коли, Брось оружие.

Ապա, չերբ գործը վերջացրին, թալանած հրացանները և զինամթերքը հավաքում, հեգնորհն ժպտում և զալկերի նման աչքերը չռած՝ նայում էին սրան-նրան:

Ջավարն ուժասպառ ընկած էր գետնին:

Ջավարը բարկությունից ու ջղայնությունից ուզում էր արաքվել, բայց լ՛նչ կարող էր անել, հոգնած, թուլացած փռված էր գետնին, անցնում էին վրայից, վոտքերով զարկում, արտաբերում:

Ջավարին թալանեցին ծեծեցին...

Նրա սպիտակ բարձի վրա՝ վորպես եկրանի անցյալի դառն հիշողություններն անցան մեկը մյուսի յետևից և վերանորոգվեցին հին-հին ցավերը:

Ձկարողացավ քնել. տխուր ու մոռլլ մտքերը ճնշում էին նրա սիրտը. դիշերը նրա համար դարձել էր կոշմարային:

Ծանոթ գեմքը նորից դժագրվեց նրա աչքերի առաջ. նորից վերհիշեց անցյալը, կրկին անգամ զգաց իր կրծքին հասցրած հրացանի կոթի կսկիծը, զինաթափ լինելը, ուշաթափ գետնին ընկնելը և ուժասպառ՝ մահվան գալարումները...

Վեր թռավ:

Արագ հագավ շորերը:

Բացեց գրասեղանի արկղը և դուրս հանեց կապտավուն յերկաթե լաշն շրթնանի զենքը, մատներով մեջ պինդ սեղմեց և դուրս թռավ բակը: Վազեց:

Միքանի վայրկյան հետո, նա արդեն կանգնած էր զանձապահի բնակարանի դռան առաջ:

Դուռը ծեծեց:

Ներսում դարթնեց մեկը:

Ներս մտավ:

— Ձհիշեցի՞ր ինձ, — փորձառու ձայնով հարցրեց նա:

Հանկարծակի հանդիպումը և անսպասելի հարցը շփոթեցրեց զանձապահին. նա դողում էր. նշմարելով Զավարի կատաղած ու կարմրած աչքերը՝ սարսափեց, յերկու ձեռքերով բռնեց իր գլխի մազերը:

— Յես հիշում եմ քեզ, — ասաց Զավարն ու բարձրացրեց իր աջ ձեռքը: Ատրճանակի սառը շրթունքն ուղղեց դեպի նրա տաք ճակատը: Մի վայրկյան ևս և տաք գնդակը կպատուի նրա ճակատը, կանցնի մինչև ուղեղը և յերկու կես կանի գանգը:

Ամուր բռնել եր ատրճանակը, մի փոքր մատի շարժում և ..

Զավարի ուղեղն սկսեց չեռ գալ, ամբողջովին բռնված եր կրակով—վառվում եր կարծես: Աչքերը կատաղի արտահայտութուն ելին ստացել, դեմքն այրվում էր, սիրտը զարկում արագ: Նրան թվում եր թե՛ պայթեց ատրճանակը, վզղաց գնդակը խողովակից, կպավ ճակատին և նա փռվեց:

Մտքերը խառնվում ելին իրար, սիրտը պղտորվել էր: Նա վառվում եր կարծես կրակի բոցերի մեջ, հրդեհ եր նրա սրտում և հանկարծ այդ ժամին հիշեց աչն շենքը, վոր մի ժամանակ տեսել եր հրդեհված: Ծուխ ու բոց եր բարձրանում. վառվում եր: Բոցավառվում եր, կայծերը թափվում ելին աջ ու ձախ և ալ-բոցով լուսավորում շրջակայքը, ողը, տարածութունը:

Այդ ժամանակ Զավարը նայում եր այդ հրդեհին և նկատում եր, թե ի՞նչպիսի լեռանդով և ճարպիկ շարժումներով հրդեհն աշխարհում եր հանդցնել կրակը և շենքն ազատել ամբողջական վոչնչացումից:

Այն ել տեսավ Զավարը. թե ի՞նչպես հրդեհն աշխարհն արդեն հանգրբին կրակը, և թե ինչպես՝ կարմրատակած հրդեհն լեզվակները կամաց կամաց գունատվեցին, մարեցին. բոցավառվող կրակը կորցրեց իր ունակութունը, իր թափը և թե ի՞նչպես կարճ ժամանակից հետո, ամին ինչ լոնց. խաղաղվեց, տեղ-տեղ միայն վերջին հոգեվարքն ապրող գերաններից դանդաղ ու հանգիստ աննշմար փոքրիկ ծուխ եր բարձրանում: Մեռելային լուսթյուն տիրեց:

Զավարի ալժմյան դրությունը, ներքին կյանքը շատ նման եր այդ շենքին: Նրա բոլոր յերակներում շարժվող արյունը կրակ եր տալիս նրա վողջ մարմինը, սակայն հետո, չերբ անցավ մի վայրկյան, Զավարը հանգավ, խաղաղվեց, մտածմունքների մեջ ընկավ, լոնց:

Ատրճանակը նուէն զրության մեջն եր. նա չեր պայթել:
Խողովակը պահպանում եր նուէն սառնությունը:

Ճակատն անշարժ եր, սակայն սարսափից սառը քրտինք
եր բռնել վրան:

Թշնամու գլխի մաղերը մնում ելին խճճված:

— Ինչո՞ւ լիս սպանում ինձ, ինչո՞ւ,— կարգացվում եր նրա
աղերսական հայացքի մեջ:

— Վո՛չ, չեմ սպանի,— խոսեց ինքն իրեն Զավարը և աջ
ձեռքը վար թողեց:

Հանկարծ, նա արագ շուռ յեկավ և սկսեց վազել: Վազում
եր ծուռ ու մուռ փողոցներով, մտքերով շարունակ կապված կեն-
դանի թողած մարդու հետ:

Վազելով մտավ տուն:

Բռնորը քնած ելին:

Դիակի, դարմացքից փալլող դեմքի վրա նշմարվում եր խա-
ղաղ ժպիտ և նրա փոքրիկ սրտիկի մեջ դարդ դառած բառերը
կրկնում եր խառնի խուռն—կցկտուր:

— Գեոիւն հո հայրիկ չե՞...

Դիակն քաղցր ու հանդիստ քնած եր: Նրա մտքի մեջ լըս-
վում ելին խոտերի, ծաղիկների և կորած ողբերի դուրեկան ու
հմայիչ ձայներ:

Վճրտեղից իմանալ Զավարը, թե ինչո՞ւ լի Դիակն քնած
այդչափ հանդիստ, իրադական հայացքով, թե ինչո՞ւ նրա դեմքն
այդչափ պեղեցիկ եր ու հրապուրիչ և ինչպե՞ս այդ սքանչելի
դեմքը վորոշակի՝ իր բնորոշ հատկություններով դժադրվում եր
սպիտակ բարձի վրա:

Դիշերը շաքարի նման հալվում եր պատուհանների մոտ.

Զավարի անքուն աչքերի մեջ շեշտակի նսլում եր գունատ-
ված սփրթնած աղջամուղջը և նրա մշտական փալլող աչքերը
նմանվում ելին ամպախառն կապույտ լերկնակամարին:

ՎՈՐԴԻՆ

Դիշերն անքուն անցկացնելուց հետո, հոգնած ու ջարդված
ուժասպառ, գլուխը կախ՝ նստած ե Զավարը:

Պատուհանից սենյակն ե թափանցում լույսը և նրան կեն-
սաբեր առավոտ ավետում. սակայն վոչ լույսը, վոչ արևը, վոչ
կենսաբեր առավոտը վոչինչ չեն ասում նրա տանջված ու փշր-
ված սրտին:

Դատարկ ե, ցուրտ ե ու խավար նրա հոգում:

Աչքերը տրորելով զարթնում ե նաև Դալին: Ամբողջ գիշերվա խաղաղ ու խոր քունը ուժեր տվել, կազդուրել եր նրան և այժմ զվարթ, կարմրած-թարմ դեմքով վերկացավ անկողնից:

Փայլում են աչքերը, նրանց մեջ առկաթում են բոցեր և փաղաքշանք խոստանում նոր առավոտին, կենսաբեր արևի ջերմ ճառագայթներին:

Սակայն հենց վոր աչքը ձգեց ամուսնու դեմքին՝ ցնցվեց, կարծես մի խուլ ճիչ լսվեց նրա սրտում, մի բան անհանգիստ եր անում նրան, շփոթված եր: Հանկարծ փակեց աչքերը և նորից գլուխը թաղեց բարձերի մեջ:

— Դիտե արդեն... իմացել ե,—մտածում ե Դալին և փոթորկի նման մի սարսուռ ե անցնում նրա դեմքին:

Ամոթի զգացումը զարթնում ե նրա մեջ. սրտում վախ ե զգում, դադուռկ ծանր վիշտ ե ապրում, տանջվում ե ինքն իրեն: Վոչինչ չի կարողանում արտահայտել և այս հանգամանքն ել ափելի դառնացնում ու անտանելի լե դարձնում նրա ներքին կյանքը:

Դալին զգում ե, վոր շատ ե սիրում Ջավարին՝ իր ամուսնուն: Իր բովանդակ մտքերում ու զգացումներով միշտ կապված ե ամուսնու հետ, շարունակ նրա շուրջն ե պտուռ գալիս, և այս սերն այնչափ ուժեղ ե, վորչափով վոր նա անխոս ե:

Նա ուզում ե գոնե մի բառ լսել Ջավարի բերանից, թեկուզ դժգոհության ու նախատինքի մի բառ, վորպեսզի հնարավորություն ունենար իր սիրտը բանալու, ասելու անկեղծորեն ամեն ինչ, ինչվոր կուտակվել եր նրա սրտում:

Սակայն լուռ եր Ջավարը: Նրան տանջում ելին գիշերվա անցրած կոշմարային ապրումները, զենքը ձեռքին պարզած բազուկը և ծանոթ դեմքը:

Դալին անխոս հագավ իր շորերը. դադուռկ, աչքի տակով նայում եր Ջավարին, նրա շարժումներից ուզում եր հասկանալ ու կարդալ ամուսնու դեմքին՝ նրան հուզող մտքերն ու զգացումները:

— Շուտ ես վեր կացի, Ջավար... զգուշությամբ ասաց Դալին և դանդաղ ու անփստահ քայլերով մոտեցավ նրան. նույն զգուշությամբ ձեռքը դրեց նրա ուսին և սպասում եր պատասխանի:

Սպառողական դրության մեջ նրա վողջ մարմինը ցնցվում

դողում եր. նրան թվում եր թե հասել ե արդեն վճռական բո-
պին Ամեն վայրկյան թվում եր նրան, թե հանկարծ վեր կենա-
Ջավարը, խիստ կերպով կկնճռոտի իր ճակատն ու հունքերը,
իր ուժեղ բազուկներով կրճնի նրա ուսերից, ամուր կհենվի
նրանց վրա, բարկացկոտ աչքերով կնայի ուղիղ նրա աչքերին
և կասի զայրացած:

— Ամոթ, հազար ամոթ, դավաճանութանդ համար. դու
նորից համարձակվել ես գալ ինձ մոտ. դադդ հերիք չե, դեռ յե-
րեւս ունես ինձ հետ խոսելու, թուհ քո նամուսին...

Այդ վճռական վայրկյանը չեր հասնում, իսկ սպասողու-
թյունն ել ավելի կրկնապատկում եր նրա սաքսափն ու ամո-
թանքը:

Գրասեղանի վրա նկատեց կապտավուն յերկաթի դինք-
առնաճակ. նա ծանր մեկնված եր սեղանի վրա՝ շրթունքը
դուրս ցցած և կարծես այդ շրթունքը, խողովակն ուղղված եր
նրան և ականջին փսփսում եր ինչվոր գաղտնի բան:

Սաքսափը պատեց նրա սրտին. մահվան նախորդակն եր
ապրում այդ վայրկյանին և բոպե առ բոպե սպասում եր վերջա-
բանին:

Ջգում և գիտակցում եր իր հանցանքը և նախքան Ջավա-
րի նրա ուսերից բռնելը՝ ինքն եր ցանկանում ասել ամեն բան,
խոստովանել ամեն ինչ:

Նույնիսկ վորոշեց խոսել.

— Ջավար—աքտասանեց հուղված ու հազիվ լսելի ձայնով
սակայն հենց այդ բորհրդավոր ժամին դուռը չբխկաց:

Ջավարը վերկացավ: Պդոոր, անորոշ հալացքով նայեց
Դալուն, ապա բացեց դուռը և սենյակ մտավ մի չերիտասարդ,
ուրախ դեմքով, ժպիտը յերեսին:

— Դուք ցանկանում ելիք ներկա լինել, թե ինչպես պիտի
բաց թողնենք ջուրը դեպի դիսավոր ջրանցքը:

— Պատրճաստ ե:

— Այո: Ամբողջ գիշերվա ընթացքում ջրամբարի-ավազանի
բերանը—պատերը ծածկված ելին: Կես ժամից հետո պիտի պալ-
թեցնենք վերջին ժալոի պատը և ջուրն ավազանից-ջրամբարից
կսկսի հոսել ջրանցքի միջով:

— Թող սպասեն, գալու յեմ,—կարճ պատասխանեց Ջա-
վարը:

Արագ հեռացավ նորեկ յերևտասարդը և սենյակում կրկին լուռթյուն տիրեց:

— Զովար. ինչու չես ավելի տխուր ու դարդոտ... անհա-
հաջող կերպով Դալին ընդհատեց լուռթյունը:

— Ափոստում եմ և տանջվում, վոր չսպանեցի...

Դալին մնաց փկտացած, կանգնած. սիրտը ստոծ եր:

Առանց մտածելու իր սարսափած աչքերը հեռացրեց նրա-
նից:

Ականջին ինչ վոր ձայներ ելին հասնում: Մի ակնթարթում
նրա հիշողության մեջ ցցվեց նորարը, վորին Դալին արդեն իր
մաքում մահվան եր դատապարտել:

Այդ վայրկյանին Զովարը նրա աչքին յերևում եր մի
սոսկալի, մի աչնալիսի սարսափելի մարդ, վորի մեջ ապրում եր
և բուն եր դրել արյունխում դադանը՝ մարդկային կերպարան-
քով, բավական եր մի փոքր շարժում, վոր այդ դադանը դարձ-
ներ և սկսեր իր գործը:

Զովարը սպասում եր Դալուց նորից մի հարցում, վորպես-
զի պատմեր նրան, թե ինչպիսի ապրումներ և ունեցել նա
նախընթաց գիշերը. սակայն լուռ եր նա:

Զովարը վեր կացավ, հազիվ ժպտացող դեմքով մոտեցավ
անկողնին, ուր հանգիստ պառկած եր Գիան և քայլերն ուղղից
դեպի ջրանցքը:

Այնտեղ հավաքված ելին արդեն մի քանի տասնյակ բան-
վորներ: Բանվորների մի մասը քանդում եր վերջին ժայռի հիմ-
քը, վորտեղ պիտի տեղավորեյին պայթուցիկ ռուբմերը, ժայռը
պայթեցնելու և հավաքված ջրին ճամբա տալու համար:

Նորարն ել ալստեղ եր: Նա հսկում եր աշխատող բանվոր
ներին, հաճախ կռահում եր և նայում ժայռի հիմքին, փորված
փոսին՝ ստուգելու համար, թե՞ վորքան խորությամբ և փորված
փոսը:

Ալստեղից ջրանցքն սկսվում եր և ձգվում չորս վերստ յեր-
կարությամբ:

Մի քանի որ առաջ, այդ նույնը ջրանցքում աշխատում
եյին մի քանի հարյուր վարպետներ, վորոնք ժայռերից պոկված
քարերով պատեր եյին կանգնեցնում, կիր ու ավազով ձեփում,
խսկ սլոթմ արդեն դատարկ եր ջրանցքը: Կես ժամ հետո ճեղք-
ված ժայռից պիտի ներխուժի Քոն ջուրը և կենդանացնի ջը-
րացքը:

— Ամեն ինչ պատրաստ եր, սպասում եյին ձեզ—սառնա-
սիրտ դիմեց Նոդարը, յերբ ջրանցքի գլխին կանգնեց Ջավարը:

— Լավ ե, վոր սպասել եք: Զուրը պիտի բաց թողնեք
յերկու վոտնաչափ բարձրությամբ, ապա պիտի բանալ արդեակ
նեբը և ավազանի ջուրը կրկին Գոի հունին պիտի հավասարվի,
պատասխանեց Ջավարը և այժ ամեց բոլոր ներկա չեղողներին:

Բանվորները տեսնելով Ջավարին՝ կենդանացան, վոգևորու-
թյուն ստացան, ավելի յեռանդով սկսեցին աշխատել նրանց
բազուկները և քլունգի յուրաքանչյուր զարկը քանդում պոկում
եր ժայռի հիմքից ահագին կտորներ:

Մի քանի վայրկյան հետո ժայռի հիմքում փորված փոսը
դրին պայթուցիկ ումբեր, պատրույքը հարմարեցրին, կրակ
տվին:—

Լավեց ուժեղ պայթունի ձայն:

Մեկը մյուսի յետևից լավում ելին պայթյունի ձայներ:

Ոգի մեջ բարձրացավ սև ու թանձր ծուխ և առավոտյան
զովարար մաքուր ողը լցրեց անդուրեկան վառոդի հոտով:

Մոնչալով ու շառաչելով փորվածքի միջից ներս խոժեց
Գուռը՝ իր հեղեղատի մեջ առնելով ժայռի կտորներ, քարեր,
հող, ավազ, տիղմ և այլն:

Ջրանցքի ամբողջ յերկարությամբ ոձի նման գալարվեց
պղտոր ջուրը և նրա մաղերևութիւնը կամաց-կամաց սկսեց բարձ-
րանալ:

Հարյուրավոր ժողովուրդ խիստ մեծ հետաքրքրությամբ և
անկեղծ խանդավառությամբ նայում եր ինչպես Գոի ջուրը ջրամ-
բարից-ավազանից հոսում եր ջրանցքի միջով հեռով և հեռով:

Հինգ յերկար ու ձիգ տարիներ սպասում ելին այս յերջա-
նիկ որվան և արդեն արժանացել ելին նրան:

Այստեղ ելին նաև Դալին և Գիան:

Նրանք հպարտությամբ, գլուխը բարձր նայում ելին մերթ
Ջավարին, մերթ այն տեղին, վորտեղից ջուրն աղմուկով ու վըշ-
շալով անցնում եր ջրանցքը:

Այս տեսարանով հափշտակվում ելին բոլորը:

Ուրախությունը կատարյալ եր. ամեն կողմից լսվում ելին
ուրախ բացականչություններ, վոգևորության խոսքեր, խոսում,
զրուցում, կենդանություն եր ամենուրեք:

Բոլորն ել անկեղծորեն ուրախանում ելին. մանավանդ
բանվորները, վոր իրենց թափած քրտինքը, իրենց քրտնաշան

աշխատանքն իզուր չանցավ. նրանց վոգեորում եր մանա-
վանդ, այն հանգամանքը, վոր ջրանցքի մեջ բաց թողած ջուրը
պիտի սկսեր գործի գցել-աշխատեցնել տուրբինները, դինամո-
մեքենաները, վորոնք լույս-լուսավորությունն պիտի տան գոր-
ծարաններին, տներին, բնակչությանը:

Ջուրը կամաց-կամաց շատանում եր:

Աղմուկն ու խանդավառ բացականչությունները շարունակ-
վում էին:

Բայց հանկարծ լավեց սրտմաշուկ մի կանչ, աղաղակ.—

— Գի-ւմ... Գի-ւմ...

Այս ակննջ ծակող վշտաբեկ ձայնը խորապես ցնցեց բո-
լորին:

Ժողովուրդը շփոթվեց, իրար անցավ:

Իսկ ջրանցքի միջով հոսող պղտոր ու վշագող ջուրը, փոքր
ձկան նման, տանում եր իր հետ Դիալին և մերթ ընդ մերթ
թաղում, անհայտացնում նրան իր ալիքների մեջ:

— Ոգնեցեք,— գոռում եր, աղիողորմ ճշում եր Դալին.
նրա բաղուկները, սիրտը, միտքն ամբողջովին տառված գետի
ալիքներով՝ շնչասպառ հետևում եր ջրի հոսանքին, վորը տա-
նում եր իր հետ իր փոքրիկ սիրելի Դիալին:

Դիան ընկել եր ջրանցքի ջրի մեջ, ջուրը քանի գնում
շատանում եր: Ջրանցքի ամբողջ լերկարությամբ և պատերի
ուղղությամբ հարյուրավոր մարդիկ հետևում էին, սակայն վոչ-
վոք չեր համարձակվում ջուրը նետվել՝ յերևխալին ազատել:

— Արգելակները բացեք և ջուրն ավազանից բաց թողեք.
լավեց Զավարի շփոթված ձայնը և մի ակնթարթում նետի նման
սլացավ ջրի հոսանքով դեպի ցած:

Մի քանի վայրկյան հետո, լերը հավասարվեց Դիալին,
թռավ նետվեց ջրանցքի մեջ, լողաց ջրի հոսանքով, հետևեց իր
զավակին, վորը բախտի ճակատագրին թողած՝ պիտի անցներ
չորս վերստ տարածություն:

Հասավ:

Ամուր բռնեց նրա թևից և հալը վորդուն պինդ սեղմեց իբ
կրծքին:

Գիտակցությունը կորցրած Դիան վոչինչ չեր տեսնում:

Ջեր զգում հալրակա ներս գիրկը, հոր թանգագին բաղուկ-
ների ուժը:

Ջուրը շարունակում եր իր վշտոցը և հեալով հոսում եր առաջ, իր հոսանքի հետ տանելով հորը և զավակին:

Ջավարի ծնկները հողնածռթխուն զգացին, վռտքերը դողում ելին:

Հաղիվ եր վռտքի կանգնած:

Ավազանի արգելախները բացին:

Ջուրն ախտեղ հանկարծ վշտոց փոթորկեց և ամբողջ իր ուժով նետուկեց դեպի Քոի հունը:

Ջրանցքի մեջ ջուրը կամաց կամաց սկսեց պակասել, քանի վոր ամբարված ջուրը մեծ թափով հոսանք եր ստացել Քոի սովորական հունի ուղղութիւնով:

Ջավարը կանգ առավ, հանգիստ, բայց խորը շունչ քաշեց:

Նայեց իր վորդուն՝ Գիային և զգաց, վոր ձեռքերի մեջ պահել ու կրծքին և սեղմել Գիայի սառած ու անկենդան դիակը:

Կարծես ինչ վոր տեղ, նրա սրտի խորունկ հանգուցներում կտրվեց այնքան աշխուժորեն աշխատող լեռակներից մեկը:

Լուռ՝ վորպես քար, ցուրտ՝ վորպես սառաց և չորացած՝ դատարկ ամանի նման, նայում եր Ջավարն իր աղետոր աչքերով:

Դուրս յեկավ ջրից, վեր բարձրացավ:

Կանգնած եր փետացած, սակայն թանգագին վորդուն պինդ սեղմել եր իր կրծքին:

Խելագարի նման մոտ վազեց Դալին:

Վերավոր ու մոլեկնած վորսի նման վրա ընկավ Ջավարին և խկեց նրա ձեռքից վորդին:

Յիբը հեռվից տեսնում եր հորը՝ զրկած Գիային և սեղմած նրա կրծքին՝ հրճվում, սքանչանում: Գերմարդկային լիբժանկութիւն եր ապրում իր սրտում, սակայն լիբը իր ձեռքերում զգաց իր վորդու. սառը դիակը՝ ձշաց զարհուլիչ ախտով և ձեռքերով քաշքշեց մաղբրը:

Նրա աչքերից մարգարիտների նման թափվում ելին արցունքներ:

Մարմարի նման լուռ ու մունջ կանգնած եր նա ու նայում իր դժբախտ ու անշնչացած վորդուն: Մի կաթիլ արցունք անգամ չեր գալիս նրա աչքերին:

Ծանր եր նրա տանջանքը, արցունքով չեր կարողանում մեղմել իր անսահման կսկիծն ու վիշտը:

Յերկար ժամանակ քարացած մտաւոյ հետո, Զաւարը վեր-
ջադիս սթափվեց:

Իր վերջին ուժերը հալածեց. մի քանի քաջ արտալ առաջ
և բարձր ձայնով կանչեց. —

— Արգելակները փակեք... այլևս մեք թողնի, վոր ավա-
զանից ջուրը Քոի հունով անցնի, թողնք հոսի, վշշա նորից
ջրանցքի միջով...

Ապա նորից լռեց:

Անսահման եր նրա կսկիծը բայց նա լավ գիտեր, իր սառը
դառաղությամբ շատ լավ եր գիտակցում, վոր միայն հայրական
ծնողական զգացմունքը չէր վոր փոթորկում եր նրա սիրտը.
նրա բովանդակ կյանքն ու ապրումները, այլ կան նաև այլ
զգացումներ, այլ ձգտումներ, վորոնք թե եյին տալիս. վոյկո-
րում եյին և գտլիք սպասելիքներով չերջանկացնում եյին:

Աշխատանքի մեջ եր վորոնում իր հանդատությունը, ան-
վերջ ու անհատանում աշխատանքի մեջ:

Սուրապիս հալածում և համոզված եր, վոր շուտ, շատ շուտ
կհասնէր իր նվիրական նպատակին, վոր իր հուժկու բազուկ-
ների տակ կխոնարհեցնէր դարեւ շարունակ աղատորէն հոսող
Քուսը: Յեւ չերեկոյան դեմ, աղջամուղջին, չերբ լիւնների սուր
զաղաթներից անհետ կանցներ հրաժեշտ կտար աշխարհին ու
մայր կմաներ վոսկիզոմ արեւը, հենց այդ նույն Քուս գետի ող-
նությամբ, ընդարձակ տարածության մեջ պիտի շողշողար ու
փալլատակեր յերկրորդ արեւը, թիֆլիսի արեւը:





ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



220038965

[404]

ԳԻՆԸ 60 ԿՈՊԵԿ. (6 մամ).

A 3896

! 631_



Элизбар Полумордвинов

Շ ա շ շ ի լ ա Ր

(Рассказы)

Перев. с груз. А. Меграбян

Госиздат ССР Армении

Эривань—1930